

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի
2010/13/ԵՄ ՀՐԱՀԱՆԳ**

**Տեսալսողական մեդիա ծառայությունների տրամադրման վերաբերյալ անդամ
պետությունների իրավունքով, կանոնակարգերով կամ վարչարարությամբ
սահմանված որոշակի դրույթների համակարգման մասին (Տեսալսողական
մեդիա ծառայությունների վերաբերյալ հրահանգ)**

(կողիֆիկացված տարբերակ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին»
պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 53(1) եւ 62-րդ հոդվածները,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,
գործելով սովորական օրենսդրական ընթացակարգի համաձայն ⁽¹⁾,

Քանի որ

- 1) «Տեսալսողական մեդիա ծառայությունների տրամադրման վերաբերյալ
անդամ պետությունների իրավունքով, կանոնակարգերով կամ
վարչարարությամբ սահմանված որոշակի դրույթների համակարգման
մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1989 թվականի
հոկտեմբերի 3-ի թիվ 89/552/ԵՏՀ հրահանգը (Տեսալսողական մեդիա
ծառայությունների վերաբերյալ հրահանգ) ⁽²⁾ մի քանի անգամ զգալի
փոփոխություններ է կրել ⁽³⁾: Հստակության եւ ռացիոնալության
նկատառումներից ելնելով՝ նշված Հրահանգը պետք է կողիֆիկացվի,
- 2) տարբեր տեխնոլոգիաների միջոցով տրամադրվող սահմանային
տեսալսողական մեդիա ծառայությունները Միության առջեւ դրված
նպատակներին հասնելու ուղիներից մեկն են: Անհրաժեշտ են որոշակի

միջոցներ, որոնք կթույլատրեն եւ կապահովեն անցումը ազգային շուկաներից դեպի հաղորդումների արտադրության եւ տարածման ընդհանուր շուկայի, ինչպես նաեւ կերաշխավորեն արդար մրցակցության պայմաններ՝ չսահմանափակելով հանրային շահի դերը, որը պետք է կատարեն տեսալսողական մեդիա ծառայությունները,

- 3) Եվրոպայի խորհուրդն ընդունել է «Անդրսահմանային հեռուստատեսության մասին» եվրոպական կոնվենցիան,
- 4) տեսալսողական մեդիա ծառայությունների փոխանցման մեջ կիրառվող նոր տեխնոլոգիաների լույսի ներքո հեռարձակման գործունեության իրականացմանը վերաբերող իրավական դաշտով պետք է հաշվի առնվի կառուցվածքային փոփոխության, տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաների (S<S) տարածման ու տեխնոլոգիական զարգացումների ազդեցությունը բիզնես մոդելների վրա, հատկապես առետրային նպատակներով հեռարձակման ֆինանսավորումը, եւ պետք է ապահովվի մրցունակության օպտիմալ պայմաններ ու իրավական որոշակիություն՝ Եվրոպայի տեղեկատվական տեխնոլոգիաների եւ դրա մեդիա ոլորտների ու ծառայությունների համար, ինչպես նաեւ հարգանք՝ մշակութային ու լեզվական բազմազանության նկատմամբ,
- 5) տեսալսողական մեդիա ծառայությունները մշակութային ծառայություններ են այնքանով, որքանով դրանք տնտեսական ծառայություններ են: Հասարակությունների, ժողովրդավարության (մասնավորապես՝ տեղեկատվության ազատության, կարծիքների բազմազանության ու լրատվամիջոցների բազմակարծության ապահովման միջոցով) կրթության ու մշակույթի համար դրանց աճող նշանակությունն արդարացնում է կոնկրետ կանոնների կիրառումն այդ ծառայությունների նկատմամբ,
- 6) «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 167(4) հոդվածով պահանջվում է, որ Միությունն այդ Պայմանագրի այլ դրույթների ներքո իր գործողություններում հաշվի առնի մշակութային հայեցակետերը՝

հատկապես իր մշակույթների բազմազանությունը հարգելու եւ խթանելու համար,

- 7) Դոհայի ռաունդում եւ Առեւտրի համաշխարհային կազմակերպության նախարարական կոնֆերանսում 2005 թվականի դեկտեմբերի 1-ի ⁽⁴⁾ եւ 2006 թվականի ապրիլի 4-ի ⁽⁵⁾ իր բանաձեւերում Եվրոպական պառլամենտը կոչ արեց, որ հիմնական հանրային ծառայությունների նկատմամբ, ինչպիսիք տեսալսողական ծառայություններն են, չկիրառվի ազատականացում՝ Ծառայությունների առեւտրի մասին գլխավոր համաձայնագրի շրջանակներում (ՄԱԳՀ) տարվող բանակցությունների համաձայն: 2006 թվականի ապրիլի 27-ի իր բանաձեւում ⁽⁶⁾ Եվրոպական պառլամենտը հավանություն տվեց «Մշակութային դրսեւորումների բազմազանության պաշտպանության եւ խթանման մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիային, որը, մասնավորապես, սահմանում է. «...մշակութային գործունեությունը, ապրանքներն ու ծառայությունները միաժամանակ տնտեսական եւ մշակութային բնույթ ունեն, որովհետեւ դրանք վերապահում են ինքնություն, արժեքներ ու իմաստներ. ուստի դրանք չպետք է համարվեն որպես բացառապես առեւտրային արժեք ունեցողներ»: «Մշակութային դրսեւորումների բազմազանության պաշտպանության եւ խթանման մասին» կոնվենցիան ⁽⁷⁾ կնքելու վերաբերյալ Խորհրդի 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 2006/515/ԵՀ որոշմամբ Համայնքի անունից հաստատվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2007 թվականի մարտի 18-ին: Սույն Հրահանգով հարգվում են այդ Կոնվենցիայի սկզբունքները,
- 8) անդամ պետությունների համար էական է ապահովել ցանկացած այնպիսի գործողության կանխում, որը կարող է վնասել հեռուստահաղորդումների տեղաշարժի ազատությանն ու առեւտրին, կամ որը կարող է նպաստել գերիշխող դիրքերի առաջացմանը, որը կհանգեցնի բազմակարծության, հեռուստատեսությամբ հաղորդվող տեղեկատվության եւ, ամբողջությամբ վերցրած, տեղեկատվական ոլորտի սահմանափակումներին,

- 9) սույն Հրահանգը չի հակասում Միության՝ ներդաշնակեցման վերաբերյալ գործող կամ հետագա ակտերին՝ հատկապես բավարարելու համար այն պարտադիր պահանջները, որոնք վերաբերում են սպառողների շահերի պաշտպանությանը եւ առետրային գործարքների ու մրցակցության արդարությանը,
- 10) ավանդական տեսալսողական մեդիա ծառայությունները, ինչպես, օրինակ՝ հեռուստատեսությունը, եւ ի հայտ եկող՝ պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունները, զբաղվածության զգալի հնարավորություններ են առաջարկում Միությունում, մասնավորապես, փոքր ու միջին ձեռնարկություններում, եւ խթանում են տնտեսական աճն ու ներդրումները: Նկատի ունենալով միասնական մրցակցային դաշտի եւ իրական եվրոպական շուկայի կարելիությունը տեսալսողական մեդիա ծառայությունների համար՝ պետք է հարգվեն ներքին շուկայի հիմնական սկզբունքները, ինչպիսիք ազատ մրցակցությունն ու հավասար վերաբերմունքն են, որոնք կապահովեն թափանցիկությունն ու կանխատեսելիությունը տեսալսողական մեդիա ծառայությունների շուկայում եւ կհասնեն նրան, որ առկա կլինեն շուկա մուտք գործելու փոքր խոչընդոտներ,
- 11) մրցակցության խաթարումներից խուսափելու, իրավական որոշակիությունը բարելավելու, ներքին շուկայի համալրմանն աջակցելու եւ ընդհանուր տեղեկատվական տարածքի ձեւավորումը հեշտացնելու համար անհրաժեշտ է կիրառել համակարգված կանոնների առնվազն մի հիմնական խումբ՝ բոլոր տեսալսողական մեդիա ծառայությունների, այդ թվում՝ հեռուստահեռարձակումների (այսինքն՝ գծային տեսալսողական մեդիա ծառայություններ) եւ պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունների (այսինքն՝ ոչ գծային տեսալսողական մեդիա ծառայություններ) նկատմամբ,
- 12) 2003 թվականի դեկտեմբերի 15-ին Հանձնաժողովն ընդունեց Հաղորդագրություն՝ տեսալսողական ոլորտի կարգավորման եվրոպական

քաղաքականության ապագայի մասին, որում շեշտեց, որ կարգավորման քաղաքականությունն այդ ոլորտում պետք է երաշխավորի որոշակի հանրային շահեր, ինչպիսիք մշակութային բազմազանությունը, տեղեկատվություն ստանալու իրավունքը, լրատվամիջոցների բազմակարծությունը, անչափահասների եւ սպառողների շահերի պաշտպանությունն են, եւ բարձրացնի հանրային իրազեկությունն ու մեդիա գրագիտությունը ներկայումս եւ ապագայում,

- 13) 1999 թվականի հունվարի 25-ին հանրային ծառայություններով հեռարձակումներին ⁽⁸⁾ վերաբերող հարցերի շուրջ Խորհրդի շրջանակներում անցկացված հանդիպմանը Խորհրդի եւ անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների կողմից ընդունված բանաձեռով վերահաստատվեց, որ հանրային ծառայություններով հեռարձակումների առաքելության իրականացման համար անհրաժեշտ է անընդհատ օգտվել տեխնոլոգիական առաջընթացից: Մասնավոր եւ հանրային տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողների համատեղ առկայությունը եվրոպական տեսալսողական մեդիա շուկայի համար տարբերակիչ հատկանիշ է,
- 14) Հանձնաժողովն ընդունել է «i2010: Եվրոպական տեղեկատվական հասարակություն» նախաձեռնությունը՝ տեղեկատվական հասարակությունում եւ մեդիա ոլորտներում աճն ու զբաղվածությունը խթանելու համար: Դա մի համապարփակ ռազմավարություն է, որով նախատեսվում է խթանել եվրոպական տեղեկատվական բովանդակության արտադրությունը, թվային տնտեսության զարգացումը եւ SCS-ի գործածումը՝ հակառակ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների ու մեդիա ծառայությունների, ցանցերի ու գործիքների միաձուլման հենքին՝ ԵՄ բոլոր ռազմավարական գործիքների (ոլորտը կարգավորող փաստաթղթեր, ոլորտի ուսումնասիրություններ ու գործընկերություն) արդիականացման ու ընդլայնման միջոցով, Հանձնաժողովը պարտավորվել է տեսալսողական ծառայությունները

կարգավորող իրավական դաշտի արդիականացման միջոցով ստեղծել տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների եւ մեդիա ծառայությունների ներքին շուկայի կայուն իրավական դաշտ: i2010 նախաձեռնության նպատակը սկզբունքորեն կիրականանա՝ թույլատրելով ոլորտների աճը միայն ըստ անհրաժեշտ կարգավորումների, ինչպես նաեւ թույլատրելով նորաստեղծ փոքր ձեռնարկություններին, որոնք ապագայի հարստությունը ստեղծողներն ու զբաղվածությունն ապահովողներն են, բարգավաճել, նորարարություններ կատարել եւ ստեղծել աշխատատեղեր ազատ շուկայում,

- 15) Եվրոպական պառլամենտը 2003 թվականի սեպտեմբերի 4-ին ⁽⁹⁾, 2004 թվականի ապրիլի 22-ին ⁽¹⁰⁾ եւ 2005 թվականի սեպտեմբերի 6-ին ⁽¹¹⁾ ընդունեց բանաձեւեր, որոնցով սկզբունքորեն կողմ էին բոլոր տեսալսողական մեդիա ծառայությունների նկատմամբ կիրառվող հիմնական կանոնների եւ հեռուստահեռարձակումների նկատմամբ կիրառվող լրացուցիչ կանոնների ընդհանուր մոտեցմանը,
- 16) սույն Հրահանգը խթանում է համապատասխանությունը հիմնարար իրավունքներին եւ լիովին համահունչ է Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիայով ⁽¹²⁾ ճանաչված սկզբունքներին, մասնավորապես՝ դրա 11-րդ հոդվածին: Այդ կապակցությամբ սույն Հրահանգը ոչ մի դեպքում չպետք է խոչընդոտի անդամ պետությունների կողմից՝ լրատվամիջոցներում մամուլի ազատությանը եւ արտահայտվելու ազատությանը վերաբերող իրենց սահմանադրական նորմերը կիրառելը,
- 17) սույն Հրահանգը չպետք է ազդի անդամ պետությունների պարտավորությունների վրա, որոնք առաջանում են «Տեխնիկական ստանդարտների ու կանոնակարգերի եւ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների նկատմամբ կիրառվող կանոնների ոլորտում տեղեկատվության տրամադրման ընթացակարգ սահմանող»՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի թիվ 98/34/ԵՀ հրահանգի կիրառությունից ⁽¹³⁾:

Համապատասխանաբար, պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունների նկատմամբ կիրառելի ազգային իրավական միջոցների նախնական տարբերակները, որոնք ավելի խիստ են ու մանրամասն, քան այն դրույթները, որոնց առկայությունը պահանջվում է պարզապես Խորհրդի «Հեռուստահեռարձակման գործունեության իրականացման վերաբերյալ անդամ պետությունների իրավունքով, կանոնակարգերով կամ վարչարարությամբ սահմանված որոշակի դրույթների համակարգման մասին» թիվ 89/552/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 2007/65/ԵՀ հրահանգը փոխատեղելու համար ⁽¹⁴⁾, պետք է ենթակա լինեն թիվ 98/34/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն սահմանված ընթացակարգային պարտավորություններին,

- 18) «Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի եւ ծառայությունների համար ընդհանուր իրավական դաշտի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի մարտի 7-ի թիվ 2002/21/ԵՀ հրահանգը (Շրջանակային հրահանգ) ¹⁵, դրա 1(3) հոդվածին համապատասխան, չի սահմանափակում Միության կամ ազգային մակարդակով ձեռնարկված միջոցները, որոնք ուղղված են ընդհանուր շահ ներկայացնող նպատակների հետապնդմանը, մասնավորապես, տեղեկատվական բովանդակության կարգավորման եւ տեսալսողական քաղաքականության առումով,
- 19) սույն Հրահանգը չի ազդում անդամ պետությունների եւ դրանց մարմինների պարտավորության վրա՝ կազմակերպման, այդ թվում՝ լիցենզավորման, վարչական կարգով տրամադրվող թույլտվության կամ հարկման համակարգերի, ֆինանսավորման եւ հաղորդումների տեղեկատվական բովանդակության առումով: Ուստի, մշակութային զարգացումների անկախությունը անդամ պետություններում եւ մշակութային բազմազանության պահպանությունը Միությունում մնում են անփոփոխ,

- 20) սույն Հրահանգի ոչ մի դրույթ չպետք է պահանջի կամ խրախուսի, որ սահմանված պետությունները տեսալսողական մեդիա ծառայությունների համար սահմանեն լիցենզավորման կամ վարչական կարգով տրամադրվող թույլտվության ցանկացած տեսակի նոր համակարգեր,
- 21) սույն Հրահանգի նպատակներով՝ տեսալսողական մեդիա ծառայության սահմանումը պետք է տարածվի միայն այն տեսալսողական մեդիա ծառայությունների վրա, անկախ այն հանգամանքից՝ դրանք հեռուստահեռարձակման թե պատվերով ծառայություններ են, որոնք զանգվածային լրատվական միջոցներ են, այսինքն, որոնք նախատեսված են լայն հասարակության զգալի հատվածի կողմից ընդունման եւ դրա վրա հստակ ազդեցություն ունենալու համար: Դրա շրջանակները պետք է սահմանափակվեն այնպիսի ծառայություններով, ինչպիսիք սահմանված են «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրով, ուստի, այն պետք է տարածվի տնտեսական գործունեության ցանկացած ձեւի վրա՝ ներառյալ հանրային ծառայություններ տրամադրող ձեռնարկությունների գործունեությունը, սակայն չպետք է տարածվի գործունեության այնպիսի տեսակների վրա, որոնք հիմնականում տնտեսական բնույթ չունեն, եւ որոնք չեն մրցակցում հեռուստահեռարձակման ծառայության հետ, ինչպես օրինակ՝ համայնքների շրջանակներում հետաքրքրության փոխանցման եւ փոխանակման նպատակներով մասնավոր օգտագործողների կողմից ստեղծված մասնավոր կայքերի, տեսալսողական տեղեկատվական բովանդակության մատուցումից կամ տարածումից բաղկացած ծառայությունների հետ,
- 22) սույն Հրահանգի նպատակներով՝ տեսալսողական մեդիա ծառայության սահմանումը պետք է տարածվի զանգվածային լրատվական միջոցների վրա, որոնց գործառույթը հանրությանը տեղեկացնելը, զվարճացնելն ու կրթելն է, եւ պետք է ներառի տեսալսողական առեւտրային հաղորդակցություն, սակայն պետք է բացառի մասնավոր նամակագրության ցանկացած ձեւ, ինչպիսին է, օրինակ՝ ստացողներին

ուղարկվող սահմանափակ թվով էլեկտրոնային փոստը: Այդ սահմանումը պետք է բացառի այն բոլոր ծառայությունները, որոնց հիմնական նպատակը հաղորդումներ ներկայացնելը չէ, այսինքն՝ ցանկացած տեսալսողական տեղեկատվական բովանդակություն գրեթե ածանցյալ է այդ ծառայությունից եւ դրա հիմնական նպատակը չէ: Օրինակները ներառում են այնպիսի կայքեր, որոնք պարունակում են տեսալսողական տարրեր միայն օժանդակ կարգով, ինչպիսիք են, օրինակ՝ անիմացիոն գրաֆիկական տարրերը, կարճ գովազդային ընդհատումները կամ արտադրությունը, կամ ոչ տեսալսողական ծառայությանն առնչվող տեղեկատվությունը: Այդ պատճառներով, դրամական արտահայտություն ունեցող խաղադրույքով շահումով խաղերը՝ ներառյալ վիճակախաղերը, գրազը եւ մոլախաղի մյուս ձեւերը, ինչպես նաեւ՝ առցանց խաղերը եւ որոնման գործիքները, սակայն ոչ մոլեխաղին կամ շահումով խաղերին նվիրված հեռարձակումները, նույնպես պետք է բացառվեն սույն Հրահանգի գործողության ոլորտից,

- 23) սույն Հրահանգի իմաստով՝ «տեսալսողական» տերմինը վերաբերում է հնչյունային կամ ոչ հնչյունային շարժական պատկերներին՝ այդպիսով ներառելով նաեւ համր ֆիլմերը՝ չտարածվելով, սակայն, ձայնային ազդակներով հեռարձակման կամ ռադիոծառայությունների վրա: Քանի որ տեսալսողական մեդիա ծառայության հիմնական նպատակը հաղորդումներ ներկայացնելն է, ապա այդպիսի ծառայության սահմանումը պետք է ներառի նաեւ հաղորդումներին կից տեքստային հիմքով տեղեկատվական բովանդակությունը, ինչպիսիք են, օրինակ՝ ենթագրերի ներմուծման ծառայությունները եւ հաղորդումների էլեկտրոնային ուղեցույցները: Առանձին տեքստային հիմքով ծառայությունները չեն մտնում սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ, որը չի ազդում այդպիսի ծառայություններն ազգային մակարդակում կարգավորելու անդամ պետությունների ազատության վրա՝ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրին համապատասխան,

- 24) պատվերով տեսալսողական մեդիա ծառայություններին բնորոշ է դրանց «հեռուստատեսային» լինելը, այսինքն՝ դրանք մրցակցում են միեւնոյն լսարանի համար, ինչպես հեռուստահեռարձակումները, եւ ծառայության բնույթն ու դրանից օգտվելու միջոցները կհանգեցնեն նրան, որ օգտագործողը սույն Հրահանգի շրջանակներում ողջամտորեն ակնկալի կարգավորիչ պաշտպանություն: Նշվածի լույսի ներքո եւ ազատ տեղաշարժի ու մրցակցության մասով անհամապատասխանությունները կանխելու նպատակով «հաղորդում» հասկացությունը պետք է մեկնաբանվի դինամիկ առումով՝ հաշվի առնելով հեռուստահեռարձակման ոլորտի զարգացումները,
- 25) «խմբագրական պատասխանատվություն» հասկացությունը կարելի է մեդիա ծառայություններ մատուցողի դերը որոշելու, ինչպես նաեւ տեսալսողական մեդիա ծառայությունները բնորոշելու համար: Անդամ պետությունները սույն Հրահանգի կիրարկման համար միջոցներ ձեռնարկելիս կարող են հետագայում սահմանել «խմբագրական պատասխանատվություն» բնորոշման հայեցակետերը եւ, հատկապես, «արդյունավետ հսկողություն» հասկացությունը: Սույն Հրահանգը չպետք է հակասի «Ներքին շուկայում տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների, մասնավորապես, «էլեկտրոնային առետրի որոշ իրավական հայեցակետերի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի հունիսի 8-ի թիվ 2000/31/ԵՀ հրահանգով (էլեկտրոնային առետրին վերաբերող հրահանգ) ⁽¹⁶⁾ սահմանված պատասխանատվությունից ազատում նախատեսող դրույթներին,
- 26) սույն Հրահանգի նպատակներով՝ «մեդիա ծառայություն մատուցող» հասկացության սահմանումը պետք է բացառի այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնք գրեթե հաղորդումների հեռարձակում են իրականացնում, որի համար խմբագրական պատասխանատվություն են կրում երրորդ անձինք,

- 27) հեռուստահեռարձակումը ներկայումս ներառում է, մասնավորապես, անալոգային եւ թվային հեռուստատեսությունը, առցանցային ուղիղ հեռարձակումը, առցանցային հեռարձակումը եւ բջջային հեռուստատեսության վիրտուալ տեսադարանը (NVOD), մինչդեռ բջջային հեռուստատեսության տեսադարանը (VOD), օրինակ, պատվերով տեսալսողական մեդիա ծառայություն է: Ընդհանրապես, միեւնույն մեդիա ծառայություն մատուցողի կողմից որպես նաեւ պատվերով տեսալսողական մեդիա ծառայություններ առաջարկվող հեռուստահեռարձակումների կամ հեռուստահաղորդումների նկատմամբ սույն Հրահանգով սահմանված պահանջները պետք է համարվեն բավարարված, եթե կատարվում են հեռուստահեռարձակման, այսինքն՝ գծային հեռարձակման նկատմամբ կիրառելի պահանջները: Այնուամենայնիվ, եթե զուգահեռաբար առաջարկվում են տարբեր տեսակի ծառայություններ, որոնք, սակայն, առանձին հստակ ծառայություններ են, սույն Հրահանգը պետք է կիրառվի տվյալ յուրաքանչյուր ծառայության նկատմամբ,
- 28) սույն Հրահանգի գործողության ոլորտը չի տարածվում թերթերի եւ ամսագրերի էլեկտրոնային տարբերակների վրա,
- 29) բնորոշման մեջ նշված եւ 21–28–րդ հղումներում բացատրված՝ տեսալսողական մեդիա ծառայության բոլոր հատկանիշները պետք է միաժամանակ առկա լինեն,
- 30) հեռուստահեռարձակումների համատեքստում համաժամանակյա դիտման հասկացությունը պետք է տարածվի նաեւ գրեթե համաժամանակյա դիտման վրա՝ հաղորդման հեռարձակումից մինչեւ դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետեւանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով,
- 31) սույն Հրահանգով պետք է սահմանվի տեսալսողական առետրային հաղորդագրության ընդարձակ բնորոշումը, որը, այնուամենայնիվ, չպետք է

ներառի անվճար հեռարձակվող՝ հանրային ծառայություններով կատարվող հայտարարությունները եւ բարեգործական նպատակին ուղղված կոչերը,

- 32) սույն Հրահանգի նպատակներով՝ պետք է բնորոշվի «Եվրոպական ստեղծագործություններ» հասկացությունը՝ չսահմանափակելով անդամ պետությունների՝ իրենց իրավազրույթյան ներքո գտնվող մեդիա ծառայություններ մատուցողների մասով առավել մանրամասն սահմանում տալու հնարավորությունը՝ Միության իրավունքին համապատասխան եւ հաշվի առնելով սույն Հրահանգի նպատակները,
- 33) ծագման երկրի սկզբունքը պետք է լինի սույն Հրահանգի առանցքը, քանի որ այն էական նշանակություն ունի ներքին շուկայի ձեւավորման համար: Այդ սկզբունքը պետք է կիրառվի բոլոր տեսալսողական մեդիա ծառայությունների նկատմամբ՝ ապահովելու համար իրավական որոշակիությունը մեդիա ծառայություններ մատուցողների համար՝ որպես նոր բիզնես մոդելների եւ այդպիսի ծառայությունների ընդլայնման անհրաժեշտ հիմք: Այն էական նշանակություն ունի նաեւ ներքին շուկայում տեղեկատվության եւ տեսալսողական հաղորդումների ազատ հոսքն ապահովելու համար,
- 34) Միության ամբողջ տարածքում ամուր, մրցունակ եւ ինտեգրված եվրոպական տեսալսողական ոլորտ ձեւավորելու եւ լրատվամիջոցների բազմակարծությունն ամրապնդելու համար միայն մեկ անդամ պետություն պետք է իրավազրույթյուն ունենա տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողի նկատմամբ, իսկ տեղեկատվության բազմակարծությունը պետք է լինի Միության հիմնարար սկզբունքը,
- 35) մի շարք գործնական չափորոշիչների ամրագրումը նախատեսված է սպառիչ ընթացակարգով որոշելու, որ միայն մեկ անդամ պետություն իրավազրույթյուն ունի մեդիա ծառայություն մատուցողի նկատմամբ՝ սույն Հրահանգով հասցեագրված ծառայությունների մատուցման կապակցությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Եվրոպական միության արդարադատության դատարանի նախադեպային իրավունքը եւ

իրավագործության բացակայության դեպքերից խուսափելու համար, որպես անդամ պետության իրավագործությունը որոշելու վերջնական չափորոշիչ՝ անհրաժեշտ է հղում կատարել հիմնադրման չափորոշիչին՝ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 49–55–րդ հոդվածների իմաստով,

- 36) այն պահանջը, ըստ որի ծագման անդամ պետությունը պետք է հաստատի, որ հեռարձակումները համապատասխանում են ազգային իրավունքին, ինչպես համակարգված է սույն Հրահանգով, Միության իրավունքի համաձայն, բավարար է հաղորդումների ազատ տեղաշարժն ապահովելու համար՝ առանց միեւնոյն հիմքերով երկրորդային հսկողություն իրականացնելու ընդունող անդամ պետությունում: Այնուամենայնիվ, ընդունող անդամ պետությունը կարող է բացառության կարգով եւ հատուկ դեպքերում պայմանականորեն կասեցնել հեռուստահեռարձակումների վերահեռարձակումը,
- 37) պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունների անվճար մատուցման նկատմամբ սահմանափակումները պետք է հնարավոր լինեն միայն՝ թիվ 2000/31/ԵՀ հրահանգի 3(4), (5) եւ (6) հոդվածով արդեն իսկ սահմանված պայմաններն ու ընթացակարգերը վերարտադրող պայմաններին ու ընթացակարգերին համապատասխան,
- 38) տեխնոլոգիական զարգացումները, հատկապես՝ թվային արբանյակային հաղորդումների առնչությամբ, նշանակում են, որ պետք է ճշգրտվեն լրացուցիչ չափորոշիչներ՝ պատշաճ կարգավորում ու դրա արդյունավետ իրականացում ապահովելու եւ տեսալսողական մեդիա ծառայության տեղեկատվական բովանդակության նկատմամբ մասնակիցներին իրական լիազորություն տալու համար,
- 39) քանի որ սույն Հրահանգը վերաբերում է Միությունում լայն հասարակությանն առաջարկվող ծառայություններին, ապա այն պետք է կիրառվի միայն այն տեսալսողական մեդիա ծառայությունների նկատմամբ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են ստացվել հանրության

կողմից մեկ կամ մի քանի անդամ պետությունում ստանդարտ սպառողական սարքավորումների միջոցով: «Ստանդարտ սպառողական սարքավորումներ» հասկացության սահմանումը պետք է թողնվի ազգային իրավասու մարմինների հայեցողությանը,

- 40) «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 49-55-րդ հոդվածներով սահմանվում են հիմնադրման ազատության հիմնարար իրավունքը: Ուստի, մեդիա ծառայություն մատուցողները պետք է, ընդհանուր առմամբ, ազատ լինեն ընտրելու իրենց հիմնադրման անդամ պետությունը: Արդարադատության դատարանը նաեւ շեշտել է, որ «Պայմանագիրը չի արգելում որեւէ կազմակերպության իրականացնելու ծառայությունների մատուցման ազատությունը, եթե այն ծառայություններ չի առաջարկում իր հիմնադրման անդամ պետությունում» ⁽¹⁷⁾,
- 41) անդամ պետությունները պետք է կարողանան սույն Հրահանգով համակարգվող ոլորտներում իրենց իրավազորության ներքո գտնվող մեդիա ծառայություն մատուցողների նկատմամբ կիրառել առավել մանրամասն կամ ավելի խիստ կանոններ՝ ապահովելով, որ այդ կանոնները համապատասխանեն Միության իրավունքի ընդհանուր սկզբունքներին: Այնպիսի իրավիճակներ հաղթահարելու համար, երբ մեկ անդամ պետության իրավազորության տակ գտնվող հեռարձակողը տրամադրում է հեռուստահեռարձակում, որն ամբողջապես կամ առավելապես ուղղված է դեպի այլ անդամ պետության տարածք, անդամ պետությունների համար նախատեսված՝ միմյանց հետ համագործակցելու պահանջը, իսկ այդ պահանջը շրջանցելու դեպքում՝ առավել արդյունավետ ընթացակարգի հետ համակցված՝ Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի համակարգումը ⁽¹⁸⁾, կլինեն համապատասխան լուծում, որը հաշվի է առնում անդամ պետությունների մտահոգությունները՝ առանց հարցականի տակ դնելու ծագման երկրի սկզբունքի պատշաճ կիրառությունը: Ընդհանուր հանրային շահ ներկայացնող կանոնների հասկացությունը ձեւավորվել է Արդարադատության դատարանի կողմից իր

նախադեպային իրավունքում՝ ԵՀ պայմանագրի 43-րդ եւ 49-րդ հոդվածների կապակցությամբ (այժմ՝ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 49-րդ եւ 56-րդ հոդվածներ) եւ, ընդ որում, ներառում է սպառողների շահերի պաշտպանությանը, անչափահասների պաշտպանությանը եւ մշակութային քաղաքականությանը վերաբերող կանոններ: Համագործակցություն պահանջող անդամ պետությունը պետք է ապահովի, որ խնդրո առարկա որոշակի ազգային կանոններ օբյեկտիվորեն անհրաժեշտ լինեն, կիրառվեն առանց որեւէ խտրականության եւ լինեն համաչափ,

- 42) անդամ պետությունն այլ անդամ պետությունում հիմնադրված մեդիա ծառայություններ մատուցողի կողմից հաղորդումն ամբողջապես կամ առավելապես իր տարածքում հեռարձակելու հարցը յուրաքանչյուր առանձին դեպքում գնահատելիս կարող է հղում կատարել այնպիսի ցուցանիշների, ինչպիսիք են՝ հեռուստագովազդի ծագումը եւ (կամ) բաժանորդագրությունից ստացված եկամուտը, մատուցվող ծառայության հիմնական լեզուն կամ դրանք ստանալու համար անդամ պետությունում կոնկրետ հանրությանն ուղղված հաղորդումների կամ առետրային հաղորդակցության առկայությունը,
- 43) սույն Հրահանգի համաձայն՝ չնայած ծագման երկրի սկզբունքի կիրառությանը, անդամ պետությունները կարող են դեռեւս միջոցներ ձեռնարկել, որոնք սահմանափակում են հեռուստահեռարձակման տեղաշարժի ազատությունը, սակայն միայն սույն Հրահանգով նախատեսված պայմաններում եւ ընթացակարգով: Այնուամենայնիվ, Արդարադատության դատարանը մշտապես համարել է, որ ծառայությունների մատուցման ազատության ցանկացած սահմանափակում, ինչպես, օրինակ՝ Պայմանագրի հիմնարար սկզբունքից ցանկացած շեղում, պետք է մեկնաբանվի սահմանափակ կերպով ⁽¹⁹⁾,
- 44) Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին ուղղված «Եվրոպական միությունում աճի եւ զբաղվածության առավել արդյունավետ կարգավորման

մասին» իր Հաղորդագրության մեջ Հանձնաժողովը շեշտեց, որ անհրաժեշտ է պատշաճ կարգավորման մոտեցման համապարփակ վերլուծություն՝ մասնավորապես սահմանելու համար, թե արդյո՞ք համապատասխան հատվածի եւ խնդրի համար նախընտրելի է օրենսդրության կիրառությունը, թե՞ պետք է քննարկվեն այլընտրանքային միջոցներ, ինչպիսին համատեղ կարգավորումը կամ ինքնակարգավորումն է: Ավելին, փորձը ցույց է տվել, որ համատեղ կարգավորման եւ ինքնակարգավորման միջոցները, որոնք իրականացվում են անդամ պետությունների տարբեր իրավական ավանդույթներին համապատասխան, կարող են կարելու դեր խաղալ սպառողների շահերի պաշտպանության բարձր մակարդակն ապահովելու հարցում: Ի հայտ եկող տեսալսողական մեդիա ծառայությունների հատվածում հանրային շահ ներկայացնող նպատակների իրականացմանն ուղղված միջոցներն ավելի արդյունավետ են, եթե դրանք ձեռնարկվում են ինքնին ծառայություններ մատուցողների ակտիվ աջակցությամբ: Այսպիսով, ինքնակարգավորումը կամավոր նախաձեռնության մի տեսակ է, որը հնարավորություն է տալիս տնտեսավարող սուբյեկտներին, սոցիալական գործընկերներին, հասարակական կազմակերպություններին կամ ասոցիացիաներին իրենց շրջանում եւ իրենց համար ընդունելու ընդհանուր ուղեցույցներ:

Անդամ պետությունները, իրենց տարբեր իրավական ավանդույթների համաձայն, պետք է ճանաչեն այն դերը, որը կարող է խաղալ արդյունավետ ինքնակարգավորումը՝ որպես առկա օրենսդրական ու դատական եւ (կամ) վարչական մեխանիզմներին լրացնող միջոց, եւ դրա օգտակար ներդրումը սույն Հրահանգի նպատակների իրականացման մեջ: Այնուամենայնիվ, մինչ ինքնակարգավորման՝ սույն Հրահանգի որոշակի դրույթների իրականացմանն ուղղված լրացուցիչ մեթոդ լինելը, այն չպետք է լինի ազգային օրենսդրի պարտականություններին փոխարինող միջոց: Համատեղ կարգավորումը նվազագույնը իրավական կապ է ստեղծում ինքնակարգավորման եւ ազգային օրենսդրի մարմնի միջեւ՝ անդամ պետությունների իրավական ավանդույթներին համապատասխան:

Համատեղ կարգավորումը պետությանը թույլ է տալիս միջամտել՝ իր նպատակները չիրականանալու դեպքում: Չսահմանափակելով անդամ պետությունների ձեռական կողմն ապահովող պարտականությունները փոխատեղման մասով՝ սույն Հրահանգը խրախուսում է համատեղ կարգավորման եւ ինքնակարգավորման միջոցների գործածությունը: Դա ո՛չ պետք է պարտավորեցնի անդամ պետություններին ձեռավորել համատեղ կարգավորման եւ (կամ) ինքնակարգավորման ռեժիմներ, եւ ո՛չ էլ խաթարի կամ վտանգի համատեղ կարգավորման, կամ ինքնակարգավորման ներկայիս նախաձեռնությունները, որոնք արդեն առկա են անդամ պետություններում, եւ որոնք արդյունավետորեն են գործում,

- 45) Տեսալսողական մեդիա ծառայությունների առանձնահատուկ բնույթի, հատկապես՝ մարդկանց մտածելակերպի վրա այդ ծառայությունների ունեցած ազդեցության պատճառով օգտագործողների համար էական է իմանալ, թե ով է պատասխանատու այդ ծառայությունների բովանդակության համար: Հետեւաբար, կարելի է, որպեսզի անդամ պետություններն ապահովեն, որ օգտագործողները ցանկացած ժամանակ հեշտությամբ եւ ուղղակիորեն օգտվեն մեդիա ծառայություններ մատուցողի մասին տեղեկատվությունից: Անդամ պետության խնդիրն այն գործնական մանրամասները որոշելն է, թե ինչպես կարելի է իրականացնել այդ նպատակը՝ չհակասելով Միության իրավունքի որեւէ այլ համապատասխան դրույթի,
- 46) Հաշմանդամների եւ տարեց անձանց՝ Միության սոցիալական ու մշակութային կյանքին մասնակցելու եւ ինտեգրվելու իրավունքն անքակտելիորեն կապված է հասանելի տեսալսողական մեդիա ծառայությունների մատուցման հետ: Հասանելիության ապահովման միջոցները պետք է ներառեն, սակայն, սահմանափակված չլինեն նշանների լեզվով, ենթագրերով, ձայնային նկարագրությամբ եւ դյուրըմբռնելի ցանկի նավիգացիայով,

- 47) «Լրատվական գրագիտությունը» ենթադրում է հմտություններ, գիտելիք եւ իմացություն, որը թույլ է տալիս սպառողներին արդյունավետ եւ անվտանգ ձեռով օգտվել լրատվական միջոցներից: Լրատվական գրագիտություն ունեցող անձինք կարող են կատարել իրազեկված ընտրություն, հասկանալ տեղեկատվական բովանդակության եւ ծառայությունների բնույթն ու լիարժեք օգտվել կապի նոր տեխնոլոգիաներով առաջարկվող բոլոր հնարավորություններից: Նրանք եւ նրանց ընտանիքներն առավել պաշտպանված են վնասակար կամ անհարմարություն պատճառող նյութերից: Ուստի, պետք է խթանվի լրատվական գրագիտության զարգացումը հասարակության բոլոր հատվածներում եւ դրա հստակ առաջընթացը: «Անչափահասների եւ մարդկային արժանապատվության պաշտպանության ու Եվրոպական տեսալսողական եւ առցանց տեղեկատվական ծառայությունների ոլորտի մրցունակության հետ կապված պատասխանի իրավունքի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի առաջարկությունն ⁽²⁰⁾ արդեն պարունակում է մի շարք հնարավոր միջոցներ՝ ուղղված լրատվական գրագիտությունը խթանելուն, ինչպիսիք են, օրինակ՝ ուսուցիչների եւ վերապատրաստողների շարունակական կրթությունը, համացանցի հատուկ դասընթացները շատ վաղ տարիքի երեխաների համար՝ ներառյալ ծնողների համար բաց դասընթացները, կամ քաղաքացիներին ուղղված ազգային քարոզչության կազմակերպումը՝ ներառելով հաղորդակցության բոլոր միջոցները՝ համացանցից պատասխանատու կերպով օգտվելու մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով,
- 48) հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների հեռուստահեռարձակման իրավունքները կարող են ձեռք բերվել հեռարձակողներից՝ բացառիկ հիմունքներով: Այնուամենայնիվ, կարելի է լրատվության արտադրության եւ հաղորդումների բազմազանության մեջ խթանել բազմակարծությունը Միության ամբողջ տարածքում եւ հարգել «Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին» խարտիայի 11-րդ հոդվածի ուժով ճանաչված սկզբունքները,

- 49) Էական է այն հանգամանքը, որ անդամ պետությունները պետք է կարողանան միջոցներ ձեռնարկել, որպեսզի պաշտպանեն տեղեկատվություն ստանալու իրավունքը եւ ապահովեն հասարակության համար մեծ նշանակություն ունեցող ազգային կամ ոչ ազգային միջոցառումների (Օլիմպիական խաղեր, Ֆուտբոլի աշխարհի գավաթ եւ Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն)²¹ հեռուստատեսությամբ ցուցադրումների հանրամատչելիությունը: Այդ նպատակով, անդամ պետությունները պահպանում են Միության իրավունքին համապատասխանող այնպիսի միջոցներ ձեռնարկելու իրավունքը, որոնք ուղղված են դրանց իրավագործության ներքո գտնվող հեռարձակողների կողմից՝ այդպիսի միջոցառումների հեռարձակման բացառիկ իրավունքների իրականացումը կարգավորելուն,
- 50) Միության շրջանակում անհրաժեշտ է միջոցառումներ իրականացնել՝ խուսափելու համար հնարավոր իրավական անորոշությունից եւ շուկայի գործունեության խաթարումից ու հեռուստատեսային ծառայությունների ազատ շրջանառությունը՝ օրինական ընդհանուր շահ պաշտպանող ազգային միջոցների շրջանցման հնարավորությունը կանխելու անհրաժեշտությանը համապատասխանեցնելու համար,
- 51) մասնավորապես, անհրաժեշտ է դրույթներ սահմանել՝ հեռարձակման բացառիկ իրավունքները հեռարձակողների կողմից իրականացնելու մասին, որոնք նրանք կարող են գնել հանրության համար մեծ նշանակություն ունեցող միջոցառումների համար՝ հեռարձակողների նկատմամբ իրավագործություն ունեցող անդամ պետությունից տարբեր այլ անդամ պետությունում: Ազգային միջոցները շրջանցելու նպատակով կատարվող՝ իրավունքների սպեկուլյատիվ գնումներից խուսափելու համար անհրաժեշտ է այդ դրույթները կիրառել Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 97/36/ԵՀ հրահանգի հրապարակումից հետո ուժի մեջ մտած ²¹ ու իրականացման ժամկետից հետո տեղի ունեցող միջոցառումներին վերաբերող պայմանագրերի նկատմամբ: Երբ պայմանագրերի ժամկետը

երկարաձգվում է՝ նախքան այդ Հրահանգի հրապարակումը, դրանք համարվում են նոր պայմանագրեր,

- 52) հանրության համար մեծ նշանակություն ունեցող միջոցառումները, սույն Հրահանգի նպատակներից ելնելով, պետք է բավարարեն որոշակի չափորոշիչներ, այսինքն՝ լինեն նշանավոր միջոցառումներ, որոնք հետաքրքրում են լայն հասարակությանը Միությունում կամ տվյալ անդամ պետությունում կամ տվյալ անդամ պետության որեւէ կարելուր հատվածում եւ կազմակերպվեն նախօրոք՝ միջոցառում կազմակերպողի կողմից, ով օրինականորեն այդպիսի միջոցառումներին առնչվող իրավունքների վաճառքի իրավունք ունի,
- 53) սույն Հրահանգի նպատակներից ելնելով՝ «անվճար հեռուստատեսություն» նշանակում է հաղորդումների հեռարձակում կամ հանրային, կամ առևտրային հեռուստաալիքով, որոնք մատչելի են հանրության համար առանց վճարի՝ ի հավելումն յուրաքանչյուր անդամ պետությունում լայնորեն տարածված՝ հեռարձակումների ֆինանսավորման եղանակներին (ինչպիսիք են, օրինակ՝ լիցենզիայի վճարը եւ (կամ) կաբելային ցանցով տրամադրվող հիմնական ծառայությունների համար գանձվող բաժանորդագրավճարը),
- 54) անդամ պետություններն ազատ են ցանկացած միջոց ձեռնարկելու հարցում, որը նրանք անհրաժեշտ կհամարեն՝ երրորդ երկրներից ստացվող եւ 2-րդ հոդվածով սահմանված պայմանները չբավարարող տեսալսողական մեդիա ծառայությունների մասով՝ պայմանով, որ այդ միջոցները համապատասխանեն Միության իրավունքին եւ Միության միջազգային պարտավորություններին,
- 55) նպատակ ունենալով երաշխավորելու տեղեկատվություն ստանալու հիմնարար ազատությունը եւ ապահովելու Միությունում հեռուստադիտողների շահերի լիարժեք ու պատշաճ պաշտպանությունը՝ հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների հեռուստահեռարձակման բացառիկ իրավունքներ իրականացնողներն

արդար, ողջամիտ եւ ոչ խտրական պայմաններում պետք է մյուս հեռարձակողներին ընդհանուր լրատվական հաղորդումներում կարճ հատվածներ օգտագործելու իրավունք տան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով բացառիկ իրավունքները: Այդպիսի պայմանների մասին պետք է տեղեկացվի ժամանակին՝ նախքան հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումը տեղի կունենա, որպեսզի մյուսները բավարար ժամանակ ունենան՝ այդպիսի իրավունքն իրականացնելու համար: Հեռարձակողը պետք է հնարավորություն ունենա իրականացնելու այդ իրավունքը հատուկ իր անունից գործող միջնորդի միջոցով՝ ըստ կոնկրետ դեպքերի: Այդպիսի կարճ հատվածներ կարող են օգտագործվել միայն ցանկացած ալիքով, այդ թվում՝ սպորտային մասնագիտացված ալիքներով՝ ամբողջ ԵՄ տարածքում հեռարձակման համար, իսկ դրանց տեւողությունը չպետք է գերազանցի 90 վայրկյանը: Կարճ հատվածների օգտագործման իրավունքը պետք է կիրառվի անդրսահմանային հիմունքներով՝ միայն անհրաժեշտության դեպքում: Հետեւաբար, հեռարձակողը պետք է նախեւառաջ հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառման հեռարձակման բացառիկ իրավունքներ ունեցող միեւնույն անդամ պետությունում հիմնադրված հեռարձակողից օգտագործման հնարավորություն հայցի:

Ընդհանուր լրատվական հաղորդումների հասկացությունը չպետք է կարճ հատվածները ժամանցի նպատակին ծառայող հաղորդումներում ընդգրկելու վրա տարածվի: Ծագման երկրի սկզբունքը պետք է կիրառվի կարճ հատվածների օգտագործման հնարավորության եւ դրանց հեռարձակման նկատմամբ: Անդրսահմանային դեպքերում դա նշանակում է, որ տարբեր օրենքներ պետք է հաջորդաբար կիրառվեն: Նախեւառաջ, կարճ հատվածների օգտագործման հնարավորության դեպքի համար պետք է կիրառվի այն անդամ պետության իրավունքը, որտեղ հիմնադրված է առաջնային ազդանշանը տրամադրող (այսինքն՝ օգտագործման հնարավորություն ընձեռող) հեռարձակողը: Դա սովորաբար այն անդամ պետությունն է, որտեղ տեղի է ունենում տվյալ միջոցառումը: Եթե անդամ

պետությունը սահմանել է տվյալ միջոցառման օգտագործման հնարավորության համարժեք համակարգ, ապա, ամեն դեպքում, պետք է կիրառվի այդ անդամ պետության իրավունքը: Երկրորդ՝ կարճ հատվածների հեռարձակման դեպքի համար պետք է կիրառվի այն անդամ պետության իրավունքը, որտեղ հիմնադրված է կարճ հատվածները հեռարձակողը,

56) լրատվական կարճ ռեպորտաժների նպատակով հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների օգտագործման իրավունքին առնչվող սույն Հրահանգի պահանջները չպետք է հակասեն «Տեղեկատվական հասարակությունում հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների որոշ հայեցակետերի ներդաշնակեցման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի մայիսի 22-ի թիվ 2001/29/ԵՀ հրահանգին ⁽²²⁾ ու հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների ոլորտի համապատասխան միջազգային կոնվենցիաներին: Անդամ պետությունները պետք է հեշտացնեն հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների հասանելիությունը՝ տրամադրելով հեռարձակողի ազդանշանի օգտագործման հնարավորություն՝ սույն Հրահանգի իմաստով: Այնուամենայնիվ, նրանք կարող են ընտրել համարժեք այլ միջոցներ՝ սույն Հրահանգի իմաստով: Այդպիսի միջոցները ներառում են, մասնավորապես, այդ միջոցառումների անցկացման վայրի մուտքի հնարավորության տրամադրում՝ նախքան ազդանշանի օգտագործման հնարավորության տրամադրումը: Հեռարձակողներին չպետք է արգելվի առավել մանրամասն պայմանագրեր կնքել,

57) պետք է ապահովվի, որ մեդիա ծառայություն մատուցողների՝ ուղիղ եթերով հեռարձակումից հետո պատվերով ուղիղ հեռուստահեռարձակվող լրատվական հաղորդումներ տրամադրելու գործելակերպը հնարավոր լինի առանց առանձին հաղորդում կազմելու՝ կարճ հատվածները բաց թողնելու միջոցով: Այդ հնարավորությունը պետք է սահմանափակվի նույն մեդիա

ծառայություն մատուցողի կողմից հաղորդման նույնական հեռուստահեռարձակման տրամադրմամբ պատվերով, որպեսզի հնարավոր չլինի օգտագործել այն՝ կարճ հատվածների հիման վրա պատվերով նոր բիզնես մոդելներ ստեղծելու համար,

- 58) պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունները տարբերվում են հեռուստահեռարձակումից՝ օգտագործողի ընտրության եւ հսկողության իրականացմամբ ու հասարակության վրա դրանց ունեցած ազդեցությամբ⁽²³⁾: Դա արդարացնում է պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունների նկատմամբ ավելի մեղմ կարգավորման սահմանումը, որոնք պետք է համապատասխանեն միայն սույն Հրահանգով նախատեսված հիմնական կանոններին,
- 59) վնասակար տեղեկատվական բովանդակության առկայությունը տեսալսողական մեդիա ծառայություններում մտահոգում է օրենսդիրներին, մեդիա ոլորտի աշխատակիցներին եւ ծնողներին: Կլինեն նաեւ նոր մարտահրավերներ՝ կապված հատկապես նոր հարթակների եւ նոր արտադրության հետ: Ուստի, անհրաժեշտ են կանոններ, որոնք բոլոր տեսալսողական մեդիա ծառայություններում, այդ թվում՝ տեսալսողական առետրային հաղորդագրություններում, պաշտպանում են անչափահասների ֆիզիկական, մտավոր եւ բարոյական զարգացումը, ինչպես նաեւ մարդկային արժանապատվությունը,
- 60) անչափահասների ֆիզիկական, մտավոր եւ բարոյական զարգացումն ու մարդկային արժանապատվությունը պաշտպանելու համար ձեռնարկված միջոցները պետք է զգուշավոր կերպով հավասարակշռված լինեն՝ արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքի հարցում, ինչպես սահմանված է «Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին» խարտիայով: Այդպիսի միջոցների նպատակը, ինչպիսիք են անհատական նույնականացման համարների գործածությունը (PIN կոդեր), ֆիլտրման համակարգերը կամ մակնշումը, պետք է այնպիսին լինեն, որ ապահովեն անչափահասների ֆիզիկական, մտավոր եւ բարոյական զարգացման ու

մարդկային արժանապատվության պաշտպանության համարժեք մակարդակ, հատկապես՝ պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունների մասով: Անչափահասների շահերի եւ մարդկային արժանապատվության պաշտպանության եւ պատասխանի իրավունքի մասին Առաջարկությամբ արդեն ճանաչվել է ֆիլտրման համակարգերի եւ մակնշման կարելությունն ու դրանում ներառվել են մի շարք հնարավոր միջոցներ՝ ի բարօրություն անչափահասների, ինչպես, օրինակ՝ արդյունավետ, թարմացվող եւ օգտագործման համար մատչելի ֆիլտրման համակարգի տրամադրում օգտագործողներին, երբ նրանք բաժանորդագրվում են օգտագործման հնարավորություն տրամադրողին կամ համալրում են երեխաների համար հատուկ նախատեսված ծառայությունների օգտագործման հնարավորությունը ավտոմատ ֆիլտրման համակարգերով,

- 61) անդամ պետությունների իրավազորության ներքո գտնվող մեդիա ծառայություններ մատուցողների նկատմամբ պետք է, ամեն դեպքում, կիրառվի մանկական պոռնկագրության տարածման արգելքը՝ «Երեխաների սեռական շահագործման եւ մանկական պոռնկագրության դեմ պայքարի մասին» Խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2004/68/ԱՆԳ շրջանակային որոշման դրույթներին համապատասխան ⁽²⁴⁾,
- 62) սույն Հրահանգի ոչ մի դրույթ, որ վերաբերում է անչափահասների ֆիզիկական, մտավոր եւ բարոյական զարգացման եւ մարդկային արժանապատվության պաշտպանությանը, անպայմանորեն չի պահանջում, որ այդ շահերի պաշտպանությանն ուղղված միջոցներն իրականացվեն պետական մարմինների կողմից տեսալսողական մեդիա ծառայությունների նախնական հավաստմամբ,
- 63) պահանջվում է համակարգում՝ մշակութային նպատակ հետապնդող հաղորդումներ թողարկող անձանց եւ ոլորտների համար իրենց գործունեության մեկնարկն ու իրականացումն առավել հեշտացնելու համար,

- 64) Միության հանրային կամ մասնավոր բոլոր հեռուստահեռարձակումների մասով եվրոպական տեսալսողական արտադրության համար նվազագույն պահանջները ծառայել են որպես վերը նշված ոլորտներում արտադրությունը, անկախ արտադրությունը եւ տարածումը խթանելու միջոցներ ու համալրում են միեւնոյն նպատակին ծառայող արդեն առաջարկված կամ առաջարկվելիք մյուս միջոցների շարքը,
- 65) հետեւաբար, անհրաժեշտ է խթանել բավարար մեծությամբ շուկաները՝ ուղղված անդամ պետությունների հեռուստատեսային արտադրությանը՝ վերականգնելու համար անհրաժեշտ ներդրումները՝ ոչ միայն ազգային շուկաների բացման ընդհանուր կանոններ սահմանելով, այլեւ, հնարավորության դեպքում եւ համապատասխան միջոցների առկայությամբ, եվրոպական արտադրության համար բոլոր անդամ պետությունների հեռուստահեռարձակումներում առավելագույն եթերաբաժին սահմանելով: Այդ կանոնների կիրառման եւ նպատակների իրականացման դիտանցումը թույլ տալու համար անդամ պետությունները Հանձնաժողով զեկույց պետք է ներկայացնեն սույն Հրահանգում եվրոպական ստեղծագործությունների եւ անկախ արտադրության համար հատկացված եթերաբաժնի կիրառման մասին Այդ եթերաբաժինների հաշվարկման համար պետք է հաշվի առնել Հունաստանի եւ Պորտուգալիայի առանձնահատուկ դրությունը: Հանձնաժողովը պետք է տեղեկացնի մյուս անդամ պետություններին այդ զեկույցների մասին, որոնց, հարկ եղած դեպքում, կցվում է եզրակացություն՝ հաշվի առնելով, մասնավորապես, նախորդ տարիների առնչությամբ արձանագրված առաջընթացը, պատրաստված ծրագրերում առաջին հաղորդումների ծավալը, հեռուստատեսային նոր հեռարձակողների առանձնահատուկ վիճակը եւ այն երկրների հատուկ դրությունը, որոնք տեսալսողական արտադրության փոքր հնարավորություններ ունեն, կամ որոնք սահմանափակված են առանձին լեզվական տարածքներով,

- 66) Միության իրավունքին համապատասխան՝ կարելի է փնտրել համապատասխան գործիքներ եւ ընթացակարգեր՝ սույն Հրահանգի նպատակների իրականացումը խթանելու համար՝ նպատակ ունենալով եվրոպական տեսալսողական արտադրության եւ տարածման գործունեությունն ու զարգացումը խթանելու համար համապատասխան միջոցներ ձեռնարկել հատկապես այն երկրներում, որոնք տեսալսողական արտադրության փոքր հնարավորություններ ունեն, կամ որոնք սահմանափակված են որոշակի լեզվական տարածքով,
- 67) եվրոպական ստեղծագործություններին հատկացված եթերաբաժինը պետք է ապահովվի՝ հաշվի առնելով տնտեսական բնույթի իրական հանգամանքները: Այդպիսով, սույն նպատակի իրականացման համար անհրաժեշտ է աստիճանական համակարգ,
- 68) հնարավորության դեպքում, հեռարձակողներից անկախ գործող պրոդյուսերների ստեղծած՝ անկախ արտադրության համար նախատեսված հաղորդումներին որոշակի եթերաբաժին հատկացնելու պարտավորությունը կխթանի հեռուստաարտադրության նոր աղբյուրների, մասնավորապես, փոքր եւ միջին ձեռնարկությունների ստեղծումը: Այն նոր հնարավորություններ եւ իրացման շուկա կառաջարկի ստեղծարար տաղանդներին, մշակութային մասնագիտությունների եւ մշակութային ոլորտում ներգրավված աշխատողներին,
- 69) պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունները հեռուստահեռարձակումներին մասնակիորեն փոխարինելու հնարավորություն ունեն: Համապատասխանաբար, դրանք պետք է, հնարավորության դեպքում, խթանեն եվրոպական ստեղծագործությունների արտադրությունն ու տարածումը եւ, այդպիսով, ակտիվ ներդրում ունենան մշակութային բազմազանության խթանման գործում: Եվրոպական ստեղծագործություններին ուղղված այդպիսի աջակցությունը պետք է դրսեւորվի, օրինակ, ֆինանսական ներդրումների ձեով՝ այդպիսի ծառայությունների միջոցով, որոնք ուղղված են

Եվրոպական ստեղծագործությունների արտադրությանն ու դրանց նկատմամբ իրավունքներ ձեռք բերելուն, պատվերով տեսանյութերի տեսադարաններում եվրոպական ստեղծագործություններին նվազագույն ծավալ հատկացնելուն կամ էլեկտրոնային ծրագրային ուղեցույցներում եվրոպական ստեղծագործությունները գրավիչ ներկայացնելուն: Կարելի է կանոնավորապես վերստուգել տեսալսողական մեդիա ծառայությունների միջոցով եվրոպական ստեղծագործությունները խթանելուն վերաբերող դրույթների կիրառումը: Սույն Հրահանգով նախատեսված զեկույցների շրջանակներում անդամ պետությունները պետք է նաեւ հաշվի առնեն, մասնավորապես, այդ ծառայությունների միջոցով իրականացվող ֆինանսական ներդրումները, որոնք ուղղված են եվրոպական ստեղծագործությունների արտադրությանն ու դրանց նկատմամբ իրավունքներ ձեռք բերելուն, տեսալսողական մեդիա ծառայությունների տեսադարաններում եվրոպական ստեղծագործություններին հատկացվող նվազագույն ծավալին, ինչպես նաեւ այդ ծառայությունների կողմից առաջարկվող եվրոպական ստեղծագործությունների սպառման իրական ծավալները,

- 70) 16-րդ հոդվածը կիրարկելիս անդամ պետությունները պետք է խրախուսեն հեռարձակողներին, որպեսզի նրանք համարժեք ծավալ հատկացնեն համատեղ արտադրության եվրոպական ստեղծագործություններին եւ ոչ հայրենական ծագմամբ եվրոպական ստեղծագործություններին,
- 71) «հեռարձակողներից անկախ արտադրողներ» հասկացությունը սահմանելիս, ինչպես նշված է 17-րդ հոդվածում, անդամ պետությունները պետք է պատշաճորեն հաշվի առնեն հատկապես այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են պրոդյուսերական ընկերության սեփականությունը, նույն հեռարձակողին մատուցվող հաղորդումների թիվը եւ երկրորդային իրավունքների տնօրինումը,
- 72) անդամ պետությունների լեզուներից տարբեր՝ ամբողջությամբ այլ լեզվով հեռարձակվող հեռուստաալիքների վրա չպետք է տարածվեն սույն

Հրահանգի 16-րդ եւ 17-րդ հոդվածները: Այնուամենայնիվ, եթե այդպիսի լեզվով կամ լեզուներով ներկայացվում է հեռուստաալիքի հեռարձակման ժամանակի ոչ թե ամբողջ, այլ զգալի մասը, ապա 16-րդ եւ 17-րդ հոդվածները չեն կիրառվում հեռարձակման ժամանակի տվյալ մասի նկատմամբ,

- 73) կարող են կիրառվել եվրոպական արտադրության զարգացմանն ուղղված ազգային օժանդակության համակարգեր՝ այնքանով, որքանով դրանք համապատասխանում են Միության իրավունքին,
- 74) Եվրոպայում տեսալսողական արտադրությանն աջակցելու նպատակը կարող է իրականացվել անդամ պետություններում իրենց տեսալսողական մեդիա ծառայությունների կազմակերպման շրջանակներում, մասնավորապես, որոշակի մեդիա ծառայություններ մատուցողների համար տալով «հանրային շահն ապահովելու առաքելություն» հասկացության սահմանումը, այդ թվում՝ սահմանելով եվրոպական արտադրությանն ուղղված ներդրումներն զգալիորեն խթանելու պարտականությունը,
- 75) մեդիա ծառայություններ մատուցողներին, հաղորդումներ պատրաստողներին, պրոդյուսերներին, հեղինակներին եւ մյուս փորձագետներին պետք է խրախուսել, որպեսզի նրանք մշակեն առավել մանրամասն հասկացություններ եւ ռազմավարություններ, որոնք ուղղված են միջազգային լսարանին հասցեագրված եվրոպական տեսալսողական գեղարվեստական ֆիլմերի զարգացմանը,
- 76) կարելի է ապահովել, որ կինեմատոգրաֆիական ստեղծագործությունները հեռարձակվեն իրավատերերի եւ մեդիա ծառայություններ մատուցողների միջեւ համաձայնեցված ժամանակահատվածում,
- 77) կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների յուրաքանչյուր տեսակի ցուցադրության համար կոնկրետ ժամանակային ծավալների հարցը, նախեսառաջ, պետք է կարգավորվի շահագրգիռ կողմերի կամ

համապատասխան մասնագետների միջեւ կնքվող համաձայնագրերի միջոցով,

- 78) կոնկրետ լեզվի օգտին ակտիվ քաղաքականության ծավալումը թույլատրելու համար անդամ պետություններն ազատ են՝ հատկապես լեզվական չափորոշիչների հիման վրա առավել մանրամասն կամ առավել խիստ կանոններ սահմանելու հարցում այնքան ժամանակ, քանի դեռ այդ կանոնները համապատասխանում են Միության իրավունքին եւ, մասնավորապես, կիրառելի չեն այլ անդամ պետություններում ստեղծվող հաղորդումների վերահեռարձակման նկատմամբ,
- 79) պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունների առկայությունը մեծացնում է սպառողների ընտրության հնարավորությունը: Պատվերով տեսալսողական մեդիա ծառայություններ ապահովող տեսալսողական առետրային հաղորդագրությունը կարգավորող մանրամասն կանոններն այդպիսով ո՛չ արդարացված են, ո՛չ էլ նպատակահարմար՝ տեխնիկական տեսանկյունից: Այնուամենայնիվ, ցանկացած տեսալսողական առետրային հաղորդագրությամբ պետք է հարգվեն ոչ միայն նույնականացման կանոնները, այլ նաեւ որակին վերաբերող հիմնական կանոնները՝ հանրային քաղաքականության հստակ նպատակներն իրականացնելու համար,
- 80) ինչպես ճանաչվել է Հանձնաժողովի կողմից «Հեռուստատեսություն առանց սահմանների» վերաբերյալ հրահանգով ⁽²⁵⁾ սահմանված հեռուստատեսային գովազդի մասին դրույթների որոշակի հայեցակարգերի շուրջ՝ մեկնաբանող բնույթ ունեցող հաղորդագրության մեջ, ավանդական հեռարձակման ծառայություններում գովազդի նոր տեխնիկայի եւ շուկայական նորարարությունների զարգացումը տեսալսողական առետրային հաղորդագրության համար ստեղծել է նոր արդյունավետ հնարավորություններ՝ դրանց իրապես հնարավորություն տալով որոշակի մակարդակի մրցակցային դաշտում ավելի լավ մրցակցելու պատվերով նորարարությունների հետ,

- 81) առեստրային եւ տեխնոլոգիական զարգացումներն օգտվողներին տալիս են ընտրության ավելի մեծ հնարավորություն եւ տեսալսողական մեդիա ծառայություններից օգտվելու հարցում ավելի մեծ պատասխանատվություն դնում նրանց վրա: Ընդհանուր շահ ներկայացնող նպատակների հետ համաչափությունը պահպանելու համար հեռուստահեռարձակման մասով պետք է թույլատրվի կարգավորման որոշակի աստիճանի ճկունություն: Տարանջատման սկզբունքը պետք է սահմանափակվի հեռուստագովազդով եւ հեռուստաշուկայով, իսկ հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունը պետք է թույլատրվի միայն որոշակի հանգամանքներում, եթե անդամ պետությունն այլ բան չի նախատեսում: Այնուամենայնիվ, եթե հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունը քողարկված է, այն պետք է արգելվի: Տարանջատման սկզբունքով չպետք է կանխվի նոր գովազդային միջոցների օգտագործումը,
- 82) չհաշված սույն Հրահանգով կարգավորվող գործելակերպերը՝ «Ներքին շուկայում սպառողների նկատմամբ ձեռնարկությունների անարդար առեստրային գործելակերպի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի թիվ 2005/29/ԵՀ հրահանգը ⁽²⁶⁾ կիրառվում է անարդար առեստրային գործելակերպերի նկատմամբ, ինչպես, օրինակ՝ տեսալսողական մեդիա ծառայությունների ոլորտում տեղի ունեցող մոլորեցնող եւ ագրեսիվ բնույթի գործելակերպերը: Բացի դրանից՝ «Ծխախոտային արտադրատեսակների գովազդին եւ հովանավորությանը վերաբերող անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի եւ վարչական ակտերի համապատասխանեցման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի թիվ 2003/33/ԵՀ հրահանգը ⁽²⁷⁾, որն արգելում է սիգարետների եւ ծխախոտային այլ արտադրատեսակների գովազդն ու հովանավորությունը տպագիր մամուլում, տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններում եւ ռադիոհեռարձակման մեջ, չպետք է հակասի սույն Հրահանգին՝ տեսալսողական մեդիա ծառայությունների բնորոշ առանձնահատկությունների առումով: «Մարդու օգտագործման համար

նախատեսված դեղագործական արտադրանքին վերաբերող Համայնքի օրենքների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 2001/83/ԵՀ հրահանգի 88(1) հոդվածը ⁽²⁸⁾, որով արգելվում է դեղագործական որոշ արտադրատեսակների գովազդը լայն հասարակության համար, կիրառվում է, ինչպես նախատեսված է այդ հոդվածի 5-րդ պարբերությամբ եւ չհակասելով սույն Հրահանգի 21-րդ հոդվածին: Ավելին, սույն Հրահանգը չպետք է հակասի «Սննդամթերքի նկատմամբ սահմանված՝ սննդարար եւ առողջարար լինելու պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 2006/1924 կանոնակարգին (ԵՀ) ⁽²⁹⁾,

- 83) հեռուստադիտողների շահերի լիարժեք եւ պատշաճ պաշտպանությունն ապահովելու համար էական է, որ հեռուստագովազդի նկատմամբ կիրառվեն որոշակի թվով նվազագույն կանոններ եւ ստանդարտներ, եւ որ անդամ պետությունները պարտադիր պահպանեն առավել մանրամասն կամ առավել խիստ կանոններ, իսկ որոշակի հանգամանքներում՝ իրենց իրավազորության ներքո գտնվող հեռուստահեռարձակողների համար այլ պայմաններ սահմանելու իրավունքը,
- 84) անդամ պետությունները, պատշաճորեն հաշվի առնելով Միության իրավունքը, եւ միայն ազգային տարածքի համար նախատեսված հաղորդումների մասով, որոնք չեն կարող ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել մեկ կամ մի քանի անդամ պետություններում, պետք է կարողանան սահմանել գովազդի տեղադրման այլ պայմաններ եւ գովազդի ծավալի այլ սահմաններ, որպեսզի խթանեն այդ առանձնակի հաղորդումները,
- 85) հաշվի առնելով հեռուստադիտողների կողմից նոր տեխնոլոգիաների, ինչպիսիք են՝ անհատական թվային տեսաձայնագրիչները եւ հեռուստաալիքների մեծ ընտրությունը, գործածության միջոցով գովազդից խուսափելու մեծ հնարավորությունները՝ հեռուստադիտողների պաշտպանության նպատակով գովազդային ընդհատում տեղադրելու

կապակցությամբ մանրամասն կարգավորումը արդարացված չէ: Թեև թույլատրելի գովազդի եթերաժամանակը չպետք է ավելացվի, սույն Հրահանգը գովազդի տեղադրման առումով պետք է հեռարձակողներին ճկունություն տրամադրի, եթե դա անտեղի չի խաթարում հաղորդումների ամբողջականությունը,

- 86) սույն Հրահանգը նախատեսված է եվրոպական հեռուստատեսության առանձնահատուկ բնույթը պահպանելու համար, որտեղ գովազդը նախընտրելի է տեղադրել հաղորդումների միջև եւ, հետեւաբար, այն սահմանափակում է հեռուստատեսության համար ստեղծված կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների եւ ֆիլմերի հնարավոր ընդհատումները, ինչպես նաեւ հատուկ պաշտպանության կարիք ունեցող մի քանի տեսակի հաղորդումների ընդհատումները,
- 87) գովազդային ընդհատումների եւ հեռուստաշուկայի ընդհատումների տեսողությունը մեկ ժամվա համար պետք է սահմանվի 20%, որը պետք է կիրառվի նաեւ «լավագույն եթերաժամ»-ի նկատմամբ: «Հեռուստագովազդային ընդհատում» հասկացությունը պետք է ընկալվի որպես հեռուստագովազդ 1(1) հոդվածի (i) կետի իմաստով, որի տեսողությունը չի գերազանցում 12 րոպեն,
- 88) անհրաժեշտ է արգելել սիգարետներ եւ ծխախոտային այլ արտադրատեսակներ գովազդող տեսալսողական առետրային հաղորդագրության բոլոր ձեւերը, այդ թվում՝ տեսալսողական առետրային հաղորդագրության անուղղակի ձեւերը, որոնք, ուղղակիորեն չնշելով ծխախոտային արտադրատեսակը, փորձում են շրջանցել սիգարետների եւ ծխախոտային այլ արտադրատեսակների մասով տեսալսողական առետրային հաղորդագրության արգելքը՝ գործածելով ծխախոտային արտադրատեսակների կամ այն կազմակերպությունների ապրանքային նշանների անվանումները, խորհրդանիշները կամ այլ տարբերակիչ հատկանիշներ, որոնք հայտնի են կամ հիմնականում զբաղվում են այդպիսի ապրանքների արտադրությամբ կամ վաճառքով,

- 89) անհրաժեշտ է արգելել նաեւ միայն դեղատոմսով բաց թողնվող դեղագործական արտադրատեսակների եւ բուժական միջոցների մասով տեսալսողական առետրային հաղորդագրության բոլոր ձեւերն այն անդամ պետությունում, որի իրավագրության ներքո է գտնվում մեդիա ծառայություն մատուցողը, ինչպես նաեւ խիստ չափորոշիչներ սահմանել ավիոհոլային արտադրանքի հեռուստատեսային գովազդի առնչությամբ,
- 90) թաքնված տեսալսողական առետրային հաղորդագրությունը սույն Հրահանգով արգելված գործելակերպ է՝ սպառողների վրա բացասական ազդեցության պատճառով: Թաքնված տեսալսողական առետրային հաղորդագրության նկատմամբ կիրառվող արգելքը սույն Հրահանգի շրջանակներում չպետք է տարածվի հովանավորի տրամադրած ապրանքի օրինական ցուցադրության վրա, եթե հեռուստադիտողը համապատասխանաբար տեղեկացված է հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրության առկայության մասին: Դա կարելի է իրականացնել՝ տվյալ հաղորդման մեջ հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրության կատարման փաստը նշելով, օրինակ՝ որեւէ չեզոք տարբերանշանի միջոցով,
- 91) հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունն իրականություն է կինեմատոգրաֆիական եւ հեռուստատեսության համար ստեղծված տեսալսողական ստեղծագործություններում: Հավասար մրցակցային դաշտ ապահովելու եւ այդպիսով եվրոպական մեդիա ոլորտում մրցունակությունը խթանելու համար անհրաժեշտ են հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունը կարգավորող կանոններ: Սույն Հրահանգով նախատեսված՝ հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրության սահմանումը պետք է տարածվի տեսալսողական առետրային հաղորդագրության վրա, որը վճարի կամ նմանատիպ փոխհատուցման դիմաց ներառում է կամ հղում է կատարում որեւէ ապրանքի, ծառայության կամ դրա ապրանքային նշանին այնպես, որ այն ցուցադրվի հաղորդման ընթացքում: Ապրանքների կամ ծառայությունների անվճար տրամադրումը,

ինչպիսիք են՝ ռեկվիզիտները կամ մրցանակները, պետք է համարվի միայն հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրություն, եթե ներառված ապրանքներն ու ծառայությունները զգալի արժեք են ներկայացնում: Հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրության նկատմամբ պետք է կիրառվեն որակին առնչվող նույն կանոններն ու սահմանափակումները, որոնք կիրառվում են տեսալսողական առետրային հաղորդագրության նկատմամբ: Հովանավորությունը հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունից տարբերակելու հիմնական չափորոշիչն այն փաստն է, որ հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրության մեջ արտադրանքին ուղղված հղումը կատարվում է հաղորդումը ցուցադրելու ժամանակ, որի համար էլ 1(1) հոդվածի (ժգ) կետով նախատեսված սահմանումը պարունակում է «մեջ» բառը: Հակառակ դրան՝ հովանավորին ուղղված հղումները կարող են ցուցադրվել հաղորդման ընթացքում, որոնք, սակայն, ցուցադրման մաս չեն կազմում,

92) հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունը պետք է սկզբունքորեն արգելվի: Այնուամենայնիվ, որոշակի տեսակի հաղորդումների համար անհրաժեշտ են շեղումներ՝ ըստ հստակ սահմանված ցանկի: Անդամ պետությունը պետք է կարողանա ամբողջապես կամ մասամբ հրաժարվել այդ շեղումներից, օրինակ՝ հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունը թույլ տա միայն այն հաղորդումներում, որոնք չեն արտադրվել բացառապես այդ անդամ պետությունում,

93) ավելին, հովանավորությունը եւ հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունը պետք է արգելվեն, եթե դրանք միջամտում են հաղորդումների բովանդակությանն այնպես, որ ներգործում են մեղիա ծառայություն մատուցողի պատասխանատվության եւ խմբագրական անկախության վրա: Դա վերաբերում է նաեւ թեմատիկ բնույթ ունեցող ցուցադրությանը,

- 94) Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրով՝ անդամ պետությունների համար սահմանված պարտավորություններին համապատասխան, անդամ պետությունները պատասխանատու են սույն Հրահանգի արդյունավետ կիրարկման համար: Դրանք ազատ են ընտրելու համապատասխան գործիքներ՝ իրենց իրավական ավանդույթներին եւ հաստատված կառույցներին ու, մասնավորապես, իրենց անկախ կարգավորող իրավասու մարմնի ձեւին համապատասխան՝ սույն Հրահանգի կիրարկման իրենց աշխատանքն անաչառ ու թափանցիկ ձեւով կատարելու համար: Ավելի կոնկրետ՝ անդամ պետությունների կողմից ընտրված գործիքները պետք է նպաստեն լրատվական բազմակարծությունը խթանելուն,
- 95) անդամ պետությունների՝ կարգավորող իրավասու մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ սերտ համագործակցությունն անհրաժեշտ է՝ սույն Հրահանգը ճշգրիտ կիրառելու համար: Նմանապես, անդամ պետությունների եւ դրանց՝ կարգավորող մարմինների միջեւ սերտ համագործակցությունն առանձնապես կարեւոր է այնպիսի ազդեցության առնչությամբ, ինչպիսին մեկ անդամ պետությունում հիմնադրված հեռարձակողները պետք է ունենան այլ անդամ պետության վրա: Եթե լիցենզավորման ընթացակարգերը նախատեսված են ազգային իրավունքով, եւ եթե խոսքը վերաբերում է ավելի, քան մեկ անդամ պետության, ցանկալի է, որ համապատասխան մարմինների միջեւ պայմանագրեր կնքվեն՝ նախքան այդպիսի լիցենզիաներ տրամադրելը: Այդ համագործակցությունը պետք է տարածվի սույն Հրահանգով համակարգվող բոլոր ոլորտների վրա,
- 96) անհրաժեշտ է պարզաբանել, որ ինքնագովազդի գործունեությունը գովազդի առանձնահատուկ ձեւ է, երբ հեռարձակողը գովազդում է իր սեփական արտադրանքը, ծառայությունները, հաղորդումները կամ հեռուստաալիքները: Մասնավորապես, հաղորդումների առանձին հատվածներից կազմված ազդերը պետք է հաղորդումներ համարվեն,

- 97) հեռարձակողի կողմից կատարվող՝ իր սեփական արտադրության հաղորդումների եւ անմիջականորեն դրանցից բխող օժանդակ արտադրության հետ կապված հայտարարություններին, ինչպես նաեւ անվճար հեռարձակվող՝ հանրության ծառայություններով կատարվող հայտարարություններին եւ բարեգործական նպատակին ուղղված կոչերին հատկացված օրական հեռարձակման ժամանակահատվածը չպետք է ներառվի հեռուստագովազդին եւ հեռուստաշուկային հատկացվող օրական կամ ժամային հեռարձակման ժամանակահատվածում,
- 98) մրցակցության խաթարումներից խուսափելու համար այդ շեղումը պետք է սահմանափակվի այնպիսի արտադրության մասին հայտարարություններով, որը բավարարում է եւ՝ տվյալ հաղորդումներին օժանդակ լինելու, եւ՝ ուղղակիորեն դրանցից բխելու երկակի պայմանը: «Օժանդակ» տերմինը վերաբերում է այնպիսի արտադրությանը, որը նախատեսված է, մասնավորապես, լսարանին այդպիսի հաղորդումներից լիովին օգտվելու կամ դրանց հետ փոխգործակցելու հնարավորություն տալու համար,
- 99) հեռուստաշուկայի զարգացման նպատակով, որը բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար տնտեսական կարեւոր գործունեություն է եւ Միության տարածքում ապրանքների ու ծառայությունների շուկայահանման իրական միջոց, կարեւոր է ապահովել սպառողների շահերի պաշտպանության բարձր մակարդակ՝ գործողության մեջ դնելով այդպիսի հաղորդումների ձեւը եւ բովանդակությունը կարգավորող համապատասխան չափանիշներ,
- 100) կարեւոր է, որ համապատասխան դրույթների կիրարկումը դիտանցելիս իրավասու ազգային մարմինները կարողանան, բացառապես հեռուստաշուկային չնվիրված հեռուստաալիքների մասով, տարբերակել մի կողմից՝ հեռուստաշուկայի ընդհատումներին, գովազդային ընդհատումներին եւ գովազդի մյուս ձեւերին հատկացված հեռարձակման ժամանակի եւ մյուս կողմից՝ հեռուստաշուկայի «պատուհաններին»

հատկացված հեռարձակման ժամանակի միջեւ: Այդպիսով, անհրաժեշտ ու բավարար է, որ յուրաքանչյուր «պատուհան» հստակորեն տարբերակվի տեսաշարային եւ ձայնաշարային միջոցներով՝ առնվազն «պատուհանի» սկզբում եւ վերջում,

- 101) սույն Հրահանգը պետք է կիրառվի բացառապես հեռուստաշուկային կամ ինքնագովազդին նվիրված հեռուստաալիքների նկատմամբ, որոնցում բացակայում են նորությունների, սպորտային հաղորդումների, ֆիլմերի, վավերագրական ֆիլմերի եւ դրամաների նման ավանդական հաղորդումների տարրերը՝ ելնելով բացառապես սույն Հրահանգի նպատակներից եւ չսահմանափակելով այդպիսի հեռուստաալիքների ներգրավվումը Միության այլ գործիքների շրջանակներում,
- 102) թեեւ հեռուստահեռարձակողները սովորաբար պարտավոր են ապահովել, որ հաղորդումներում փաստերն ու իրադարձություններն արդարացի կերպով ներկայացվեն, այնուամենայնիվ, կարելի է, որ նրանք ունենան կոնկրետ պարտավորություններ պատասխանի իրավունքի կամ պաշտպանության համարժեք միջոցների մասով այնպես, որ յուրաքանչյուր անձ, որի օրինական շահերը ոտնահարվել են հեռարձակվող հեռուստահաղորդման ընթացքում արված հայտարարությամբ, կարողանա արդյունավետորեն իրականացնել այդ իրավունքը կամ պաշտպանությունը,
- 103) պատասխանի իրավունքը հեռուստահեռարձակման համար անհրաժեշտ իրավական պաշտպանության միջոց է եւ կարող է կիրառվել նաեւ առցանց միջավայրում: Անչափահասների եւ մարդկային արժանապատվության պաշտպանության եւ պատասխանի իրավունքի մասին Առաջարկությունն արդեն ներառում է ազգային իրավունքի կամ գործելակերպի կիրարկման համար անհրաժեշտ ուղեցույցներ այնպես, որ բավարար չափով ապահովվի պատասխանի իրավունքը կամ պաշտպանության համարժեք միջոցները առցանց լրատվության առնչությամբ,
- 104) քանի որ սույն Հրահանգի նպատակները, այն է՝ տեսալսողական մեդիա ծառայությունների համար առանց ներքին սահմանների տարածքի

ստեղծումը՝ միեւնույն ժամանակ ապահովելով ընդհանուր շահ ներկայացնող նպատակների, մասնավորապես, անչափահասների շահերի եւ մարդկային արժանապատվության պաշտպանության բարձր մակարդակ, ինչպես նաեւ նպաստելով հաշմանդամների իրավունքների իրականացմանը, չեն կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից եւ, հետեւաբար, կարող են, սույն Հրահանգի մասշտաբից եւ հետեւանքներից ելնելով, առավել լավ իրականացվել Միության մակարդակով, Միությունը կարող է միջոցներ սահմանել՝ սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է «Եվրոպական միության հիմնադրման մասին» պայմանագրի 5-րդ հոդվածով: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի գերազանցում այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ միջոցների շրջանակը,

- 105) սույն Հրահանգը չի հակասում I հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 1

1. Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները՝
- ա) «տեսալսողական մեդիա ծառայություն» նշանակում է՝

i) «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 56-րդ եւ 57-րդ հոդվածներով սահմանված ծառայություն, որի համար խմբագրական պատասխանատվություն է կրում մեդիա ծառայություն մատուցողը, եւ որի գլխավոր նպատակը տեղեկացնելու, զվարճացնելու կամ կրթելու համար հաղորդումներ ներկայացնելն է հանրությանը էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով՝ թիվ 2002/21/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի (ա) կետի իմաստով: Նման տեսալսողական մեդիա ծառայությունը կամ սույն պարբերության (ե) կետով սահմանված հեռուստահաղորդում է, կամ սույն պարբերության (ե) կետով սահմանված՝ պատվերով տեսալսողական մեդիա ծառայություն.

ii) տեսալսողական առետրային հաղորդագրություն.

բ) «հաղորդում» նշանակում է առանձին միավոր հանդիսացող շարժուն պատկերների ամբողջություն՝ ձայնային ուղեկցությամբ կամ առանց դրա, մեդիա ծառայություն մատուցողի կողմից հաստատված ժամանակացույցով կամ ծրագրով, որի ձեւը եւ բովանդակությունը համեմատելի են հեռուստահեռարձակման ձեւի եւ բովանդակության հետ: Հաղորդումների օրինակները ներառում են լիամետրաժ կինոնկարներ, սպորտային իրադարձություններ, կատակերգական հեռուստասերիալներ, փաստավավերագրական ֆիլմեր, մանկական հաղորդումներ եւ դրամաներ.

գ) «խմբագրական պատասխանատվություն»՝ նշանակում է արդյունավետ հսկողության իրականացում հաղորդումների ընտրության եւ դրանց կազմակերպման գործընթացի նկատմամբ կամ, ըստ ժամանակագրական ժամանակացույցի, հեռուստահաղորդումների դեպքում, կամ, ըստ ծրագրերի՝ պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունների դեպքում: Խմբագրական պատասխանատվությունն անպայմանորեն չի ենթադրում որեւէ իրավական պատասխանատվություն ազգային իրավունքի շրջանակներում՝ տեղեկատվական բովանդակության կամ մատուցված ծառայությունների համար.

- դ) «մեդիա ծառայություն մատուցող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիա ծառայության տեսալսողական բովանդակության ընտրության համար եւ որոշում է դրա կազմակերպման եղանակը.
- ե) «հեռուստահեռարձակում» կամ «հեռուստահաղորդում» (այսինքն՝ գծային տեսալսողական մեդիա ծառայություն) նշանակում է մեդիա ծառայություն մատուցողի կողմից մատուցված տեսալսողական մեդիա ծառայություն՝ ծրագրերի ժամանակացույցի հիման վրա հաղորդումների համաժամանակյա դիտման համար.
- զ) «հեռարձակող» նշանակում է հեռուստահաղորդումների մեդիա ծառայություն մատուցող.
- է) «պատվերով տեսալսողական մեդիա ծառայություն» (այսինքն՝ ոչ գծային տեսալսողական մեդիա ծառայություն) նշանակում է տեսալսողական մեդիա ծառայություն, որ տրամադրվում է մեդիա ծառայություն մատուցողի կողմից օգտագործողի նախընտրած պահին եւ հաղորդումների դիտման համար նրա անհատական պահանջով՝ մեդիա ծառայություն մատուցողի կողմից ընտրված հաղորդումների ծրագրի հիման վրա.
- ը) «տեսալսողական առետրային հաղորդագրություն» նշանակում է ձայնային ուղեկցությամբ կամ առանց դրա պատկերներ, որոնք նախատեսված են ապրանքներ, ծառայություններ կամ տնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձի իմիջն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գովազդելու համար: Այդպիսի պատկերները հաղորդմանը կից են ներկայացվում կամ ընդգրկվում դրա մեջ՝ վճարի կամ համանման փոխհատուցման դիմաց կամ ինքնագովազդի նպատակներով: Տեսալսողական առետրային հաղորդագրության ձեւերը ներառում են, մասնավորապես, հեռուստագովազդը, հովանավորությունը, հեռուստաշուկան եւ հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունը.

թ) «հեռուստագովազդ» նշանակում է հայտարարության հեռարձակման ցանկացած տեսակ՝ վճարի կամ համանման փոխհատուցման դիմաց կամ ինքնագովազդի նպատակներով, որն իրականացվում է պետական կամ մասնավոր կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից առևտրի, բիզնեսի, արհեստի կամ մասնագիտության առնչությամբ՝ ապրանքների կամ ծառայությունների մատակարարումը՝ ներառյալ անշարժ գույքը, իրավունքները եւ պարտավորությունները վճարի դիմաց գովազդելու համար.

ժ) «տեսալսողական առևտրային թաքնված հաղորդագրություն» նշանակում է ապրանքները, ծառայությունները, ապրանքներ արտադրողի կամ ծառայություններ մատուցողի անվանումը, ապրանքային նշանը կամ գործունեությունը՝ բառերով կամ պատկերներով ներկայացնելը հաղորդումներում, երբ նման ներկայացումը մեղիա ծառայություններ մատուցողի կողմից նախատեսված է որպես գովազդ եւ իր բնույթով կարող է մոլորեցնել հանրությանը: Նման ներկայացումը, մասնավորապես, համարվում է միտումնավոր, եթե այն կատարվել է վճարի կամ համանման փոխհատուցման դիմաց.

ժա) «հովանավորություն» նշանակում է տեսալսողական մեղիա ծառայությունների մատուցմամբ կամ տեսալսողական ստեղծագործությունների արտադրությամբ չզբաղվող պետական կամ մասնավոր կազմակերպությունների, կամ ֆիզիկական անձանց կողմից տեսալսողական մեղիա ծառայությունների, կամ հաղորդումների արտադրության ֆինանսավորման մեջ կատարված ցանկացած ներդրում, որի նպատակը դրանց անվանումը, ապրանքային նշանը, իմիջը, գործունեությունը կամ ապրանքները գովազդելն է.

ժբ) «հեռուստաշուկա» նշանակում է հանրության համար հեռարձակվող ուղղակի առաջարկներ՝ վճարի դիմաց ապրանքներ կամ ծառայություններ՝ ներառյալ անշարժ գույք, իրավունքներ եւ պարտավորություններ տրամադրելու նպատակով.

ժգ) «հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրություն » նշանակում է տեսալսողական առեստրային հաղորդագրություն, որը վճարի կամ նման փոխհատուցման դիմաց ներառում է որեւէ ապրանք կամ հղում որեւէ ապրանքի, ծառայության կամ դրա ապրանքային նշանի՝ այնպես, որ այն ցուցադրվի հաղորդման մեջ.

ժդ) «Եվրոպական ստեղծագործություններ» նշանակում է հետեւյալը՝

i) անդամ պետության ծագում ունեցող ստեղծագործություններ.

ii) Եվրոպայի խորհրդի «Անդրսահմանային հեռուստատեսության մասին» եվրոպական կոնվենցիայի մասնակից եվրոպական երրորդ երկրի ծագում ունեցող ստեղծագործություններ, որոնք բավարարում են 3-րդ պարբերությամբ նախատեսված պայմանները.

iii) տեսալսողական ոլորտի վերաբերյալ՝ Միության եւ երրորդ երկրների միջեւ կնքված համաձայնագրերի շրջանակներում համատեղ արտադրված ստեղծագործություններ, որոնք բավարարում են այդ համաձայնագրերից յուրաքանչյուրով սահմանված պայմանները:

2. 1-ին պարբերության (ժդ)(ii) եւ (iii) կետերի դրույթների կիրառումը պայմանավորված է անդամ պետության ծագում ունեցող այն ստեղծագործությունների նկատմամբ, որոնք տվյալ երրորդ երկրում չեն համարվում խտրական միջոցների առարկա:

3. 1-ին պարբերության (ժդ)(i) եւ (ii) կետերում նշված ստեղծագործությունները հիմնականում պատրաստված են այդ դրույթներով նախատեսված պետություններից մեկում կամ մի քանիսում բնակվող հեղինակների եւ աշխատողների կողմից՝ պայմանով, որ դրանք բավարարում են հետեւյալ երեք պայմաններից մեկը՝

i) դրանք պատրաստված են այդ պետություններից մեկում կամ մի քանիսում հիմնադրված մեկ կամ ավելի արտադրողների կողմից.

- ii) գործերի արտադրությունը վերահսկվում է փաստացի հսկվում է այդ պետություններից մեկում կամ մի քանիսում հիմնադրված մեկ կամ ավելի արտադրողների կողմից.
- iii) այդ պետությունների համատեղ արտադրողների ներդրումը, համատեղ արտադրության ընդհանուր ծախսերի հետ համեմատած, գերակշռում է, եւ համատեղ արտադրությունը չի հսկվում այդ պետություններից դուրս հիմնադրված մեկ կամ ավելի արտադրողների կողմից:

4. 1-ին պարբերության (Ժդ) կետի իմաստով եվրոպական ստեղծագործություններ չհանդիսացող գործերը, որոնք, սակայն, արտադրվում են անդամ պետությունների եւ երրորդ երկրների միջեւ կնքված՝ համատեղ արտադրությանը վերաբերող երկկողմ համաձայնագրերի շրջանակներում, համարվում են եվրոպական ստեղծագործություններ՝ պայմանով, որ Միության համատեղ արտադրողները տրամադրեն արտադրության ընդհանուր ծախսի մեծ մասնաբաժինը, եւ որ արտադրությունը չհսկվի այդ պետություններից դուրս հիմնադրված մեկ կամ ավելի արտադրողների կողմից:

ԳԼՈՒԽ II

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 2

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ իր իրավազորության ներքո գտնվող մեդիա ծառայություն մատուցողի կողմից տրամադրվող բոլոր տեսալսողական մեդիա ծառայությունները համապատասխանեն տվյալ անդամ պետությունում հանրության համար նախատեսված տեսալսողական մեդիա ծառայությունների նկատմամբ կիրառվող իրավական համակարգի կանոններին:

2. Սույն Հրահանգի նպատակներով՝ անդամ պետության իրավազորության ներքո գտնվող՝ մեդիա ծառայություններ մատուցողներ են՝

ա) 3-րդ պարբերությանը համապատասխան՝ տվյալ անդամ պետությունում հիմնադրված անձինք.

բ) այն անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է 4-րդ պարբերությունը:

3. Սույն Հրահանգի նպատակներով՝ մեդիա ծառայություններ մատուցողը համարվում է անդամ պետությունում հիմնադրված հետեւյալ դեպքերում՝

ա) մեդիա ծառայություններ մատուցողի գլխավոր գրասենյակը գտնվում է տվյալ անդամ պետությունում, եւ տեսալսողական մեդիա ծառայությունների մասին խմբագրական որոշումները կայացվում են այդ անդամ պետությունում.

բ) եթե մեդիա ծառայություններ մատուցողի գլխավոր գրասենյակը գտնվում է մի անդամ պետությունում, իսկ տեսալսողական մեդիա ծառայությունների մասին խմբագրական որոշումները կայացվում են մեկ այլ անդամ պետությունում, ապա նա համարվում է հիմնադրված այն անդամ պետությունում, որտեղ գործում է տեսալսողական մեդիա ծառայությունների մատուցման գործունեության մեջ ընդգրկված աշխատուժի զգալի մասը: Եթե տեսալսողական մեդիա ծառայությունների մատուցման գործունեությամբ զբաղվող աշխատուժի զգալի մասը գործում է այդ անդամ պետություններից յուրաքանչյուրում, ապա մեդիա ծառայություններ մատուցողը հիմնադրված է համարվում այն անդամ պետությունում, որտեղ գտնվում է իր գլխավոր գրասենյակը: Եթե տեսալսողական մեդիա ծառայությունների մատուցման գործունեության մեջ ընդգրկված աշխատուժի զգալի մասը չի գործում այդ անդամ պետություններից եւ ոչ մեկում, մեդիա ծառայություններ մատուցողը հիմնադրված է համարվում այն անդամ պետությունում, որտեղ առաջին անգամ սկսել է իր գործունեությամբ զբաղվել՝ այդ անդամ պետության իրավունքին համապատասխան՝ պայմանով, որ այն հաստատուն եւ արդյունավետ կապ է պահպանում տվյալ անդամ պետության տնտեսության հետ.

գ) Եթե մեդիա ծառայություններ մատուցողի գլխավոր գրասենյակը գտնվում է անդամ պետությունում, իսկ տեսալսողական մեդիա ծառայությունների մասին որոշումները կայացվում են երրորդ երկրում կամ ընդհակառակը, ապա այն հիմնադրված է համարվում տվյալ անդամ պետությունում՝ պայմանով, որ տեսալսողական մեդիա ծառայությունների մատուցման գործունեության մեջ ընդգրկված աշխատուժի զգալի մասը գործում է այդ անդամ պետությունում:

4. Այն մեդիա ծառայություններ մատուցողները, որոնց նկատմամբ չեն կիրառվում 3-րդ պարբերության դրույթները, համարվում են անդամ պետության իրավազրկության ներքո գտնվող հետեւյալ դեպքերում՝

ա) օգտագործում են տվյալ անդամ պետությունում տեղակայված արբանյակային կապի երկրային կայանի միջոցով ափիլինք (up-link).

բ) թեեւ տվյալ անդամ պետությունում տեղակայված արբանյակային կապի երկրային կայանի միջոցով ափիլինք չեն օգտագործում, սակայն օգտագործում են այդ անդամ պետությանը պատկանող արբանյակային կապի հնարավորությունները:

5. Եթե 3-րդ եւ 4-րդ պարբերություններին համապատասխան չի կարող որոշվել այն հարցը, թե որ անդամ պետությունն իրավազրկություն ունի, ապա իրավասու է համարվում այն անդամ պետությունը, որտեղ մեդիա ծառայություններ մատուցողը հիմնադրվել է՝ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 49–55-րդ հոդվածների իմաստով:

6. Սույն Հրահանգը չի կիրառվում բացառապես երրորդ երկրներում ստանալու համար նախատեսված տեսալսողական մեդիա ծառայությունների նկատմամբ, որոնք ստանդարտ սպառողական սարքավորումներով ուղղակի կամ անուղղակի կերպով չեն ստացվում հանրության կողմից մեկ կամ մի քանի անդամ պետություններում:

Հողված 3

1. Անդամ պետություններն ապահովում են ստացման ազատությունը եւ չեն սահմանափակում այլ անդամ պետություններից մատուցվող տեսալսողական մեդիա ծառայությունների տրամադրումն իրենց տարածքում՝ սույն Հրահանգով համակարգվող ոլորտներին առնչվող պատճառներով:

2. Հեռուստահեռարձակումների առնչությամբ անդամ պետությունները կարող են պայմանականորեն շեղում կատարել 1-ին պարբերության դրույթներից, եթե բավարարվում են հետեւյալ պայմանները՝

- ա) այլ անդամ պետությունից հեռարձակվող հեռուստահաղորդումն ակնհայտ եւ լուրջ կերպով խախտում է 27(1) կամ (2) հոդվածի եւ (կամ) 6-րդ հոդվածի դրույթները.
- բ) նախորդ 12 ամսվա ընթացքում հեռարձակողն առնվազն նախորդ երկու դեպքում խախտել է (ա) կետով նախատեսված դրույթը (դրույթները).
- գ) տվյալ անդամ պետությունը գրավոր ծանուցել է հեռարձակողին եւ Հանձնաժողովին ենթադրյալ խախտումների եւ այն միջոցների մասին, որոնք նախատեսում է ձեռնարկել, եթե այդպիսի խախտում կրկին տեղի ունենա.
- դ) հեռարձակող անդամ պետության եւ Հանձնաժողովի հետ խորհրդակցությունները չեն հանգեցրել հարցի խաղաղ ճանապարհով լուծման (գ) կետով նախատեսված ծանուցման 15 օրվա ընթացքում, եւ ենթադրյալ խախտումը դեռեւս չի վերացվել:

Հանձնաժողովը, անդամ պետության կողմից ձեռնարկվող միջոցների մասին ծանուցումից հետո երկու ամսվա ընթացքում որոշում է կայացնում՝ Միության իրավունքին այդ միջոցների համապատասխանության հարցի վերաբերյալ: Եթե որոշվում է, որ դրանք համապատասխան չեն, ապա անդամ պետությունից պահանջվում է անհապաղ դադարեցնել այդ միջոցների կիրառումը:

3. 2–րդ պարբերությունը չպետք է հակասի տվյալ խախտումների նկատմամբ կիրառվող ընթացակարգերին, պաշտպանության միջոցներին կամ պատժամիջոցներին՝ տվյալ հեռարձակողի նկատմամբ իրավազորություն ունեցող անդամ պետությունում:

4. Պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունների առնչությամբ անդամ պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել՝ տվյալ ծառայության մասով 1–ին պարբերությունից շեղում կատարելու համար, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

ա) միջոցները, որոնք՝

i) անհրաժեշտ են հետևյալ հիմքերից որեւէ մեկով՝

– հանրային կարգի պահպանություն, մասնավորապես, հանցագործությունների կանխում, քննություն, բացահայտում եւ հետապնդում, այդ թվում՝ անչափահասների շահերի պաշտպանություն ու ռասայի, սեռի, կրոնի կամ քաղաքացիության հիմքով ատելություն հրահրելու ցանկացած դրսեւորման եւ առանձին անձանց մարդկային արժանապատվության ոտնահարման դեմ պայքար.

– հանրային առողջապահության պահպանություն.

– հանրային անվտանգության, այդ թվում՝ ազգային անվտանգության եւ պաշտպանության ապահովում.

– սպառողների, այդ թվում՝ ներդրողների շահերի պաշտպանություն.

ii) ձեռնարկվում են (i) կետով նախատեսված նպատակների իրագործմանը կամ այդ նպատակների իրագործման համար լուրջ վտանգ ներկայացնող պատվերով տեսալսողական մեդիա ծառայության դեմ.

iii) պետք է համաչափ լինեն այդ նպատակներին.

բ) նախքան տվյալ միջոցների ձեռնարկումը եւ, չհակասելով դատական վարույթներին, այդ թվում՝ քրեական հետապնդման շրջանակներում

իրականացված նախնական վարույթներին եւ կատարված գործողություններին, անդամ պետությունը՝

- i) դիմել է մեդիա ծառայություն մատուցողի նկատմամբ իրավազրոյթություն ունեցող անդամ պետությանը՝ միջոցներ ձեռնարկելու համար, եւ վերջինս չի ձեռնարկել նշված միջոցները կամ ձեռնարկել է ոչ համարժեք միջոցներ.
- ii) ծանուցել է Հանձնաժողովին եւ մեդիա ծառայություն մատուցողի նկատմամբ իրավազրոյթություն ունեցող անդամ պետությանը այդպիսի միջոցներ ձեռնարկելու իր մտադրության մասին:

5. Անդամ պետությունները կարող են հրատապ դեպքերում շեղում կատարել 4-րդ պարբերության (բ) կետով սահմանված պայմաններից: Այդ դեպքում ձեռնարկված միջոցների մասին պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում ծանուցվի Հանձնաժողովին եւ մեդիա ծառայություն մատուցողի նկատմամբ իրավազրոյթություն ունեցող անդամ պետությանը՝ նշելով հրատապության առկայության հիմքերը:

6. Չսահմանափակելով 4-րդ եւ 5-րդ պարբերություններով նախատեսված միջոցներն իրականացնելու հնարավորությունը՝ Հանձնաժողովը հնարավորինս սեղմ ժամկետում ուսումնասիրում է ծանուցված միջոցների համապատասխանությունը Միության իրավունքին: Եթե այն գալիս է այնպիսի եզրակացության, որ միջոցները չեն համապատասխանում Միության իրավունքին, ապա Հանձնաժողովը դիմում է տվյալ անդամ պետությանը՝ զերծ մնալ առաջարկված որեւէ միջոց ձեռնարկելուց կամ անհապաղ դադարեցնել այդ միջոցների կիրառումը:

Հոդված 4

1. Անդամ պետությունները պետք է ազատ լինեն իրենց իրավազրոյթության ներքո գտնվող մեդիա ծառայություն մատուցողներից պահանջելու պահպանել առավել մանրամասն կամ առավել խիստ կանոններ սույն Հրահանգով

համակարգվող ոլորտներում՝ պայմանով, որ այդ կանոնները համապատասխանում են Միության իրավունքին:

2. Այն դեպքերում, երբ անդամ պետությունը՝

ա) իրականացրել է 1-ին պարբերությամբ սահմանված՝ ընդհանուր հանրային շահ ներկայացնող առավել մանրամասն կամ առավել խիստ կանոնների ընդունման հետ կապված իր ազատությունը, եւ

բ) գնահատում է, որ այլ անդամ պետության իրավազորության ներքո գտնվող հեռարձակողը տրամադրում է հեռուստահաղորդում, որն ամբողջությամբ կամ առավելապես ուղղված է իր տարածքին,

այն կարող է կապ հաստատել իրավազորություն ունեցող անդամ պետության հետ՝ նպատակ ունենալով երկուստեք բավարարող լուծում գտնելու բաժրացված ցանկացած խնդրի համար: Առաջին անդամ պետության կողմից ստացված հիմնավորված պահանջ ստանալու դեպքում, իրավազորություն ունեցող անդամ պետությունը դիմում է հեռարձակողին՝ ընդհանուր հանրային շահ ներկայացնող համապատասխան կանոնները պահպանելու պահանջով: Իրավազորություն ունեցող անդամ պետությունը ձեռք բերված արդյունքների մասին այդ դիմումին հաջորդող երկու ամսվա ընթացքում տեղեկացնում է առաջին անդամ պետությանը: Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է հրավիրել 29-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ փոխադարձ կապն ապահովող կոմիտեին՝ ուսումնասիրելու գործը:

3. Առաջին անդամ պետությունը կարող է համապատասխան միջոցներ ձեռնարկել տվյալ հեռարձակողի դեմ, եթե այն գնահատում է, որ՝

ա) 2-րդ պարբերության կիրառման միջոցով ստացված արդյունքներն անբավարար են, եւ

բ) տվյալ հեռարձակողը հիմնադրվել է իրավազորություն ունեցող անդամ պետությունում՝ նպատակ ունենալով սույն Հրահանգով համակարգվող ոլորտներում շրջանցելու առավել խիստ կանոնները, որոնք կկիրառվեին դրա նկատմամբ, եթե այն հիմնադրված լիներ առաջին անդամ պետությունում:

Այդպիսի միջոցները պետք է օբյեկտիվորեն անհրաժեշտ լինեն, դրանք պետք է կիրառվեն առանց որեւէ խտրականության եւ համաչափ լինեն դրանցով հետապնդվող նպատակներին:

4. Անդամ պետությունը կարող է միջոցներ ձեռնարկել 3-րդ պարբերության համաձայն՝ միայն հետեւյալ պայմանները բավարարելու դեպքում՝

ա) այն նման միջոցներ ձեռնարկելու իր մտադրության մասին ծանուցել է Հանձնաժողովին եւ այն անդամ պետությանը, որտեղ հեռարձակողը հիմնադրվել է՝ միեւնույն ժամանակ հիմնավորելով իր կողմից գնահատման հիմքերը, եւ

բ) Հանձնաժողովը որոշել է, որ միջոցները համապատասխանում են Միության իրավունքին եւ, մասնավորապես, որ 2-րդ եւ 3-րդ պարբերությունների համաձայն, այդ միջոցները ձեռնարկող անդամ պետության կողմից կատարված գնահատումները ճշգրտորեն հիմնավորված լինեն:

5. Հանձնաժողովը պետք է որոշում կայացնի 4-րդ պարբերության (ա) կետով նախատեսված ծանուցմանը հաջորդող երեք ամսվա ընթացքում: Եթե Հանձնաժողովը որոշում է, որ միջոցները չեն համապատասխանում Միության իրավունքին, ապա տվյալ անդամ պետությունը պետք է զերծ մնա առաջարկված միջոցները ձեռնարկելուց:

6. Անդամ պետությունները պետք է իրենց օրենսդրության շրջանակներում պատշաճ միջոցներով ապահովեն, որ իրենց իրավազրության ներքո գտնվող մեդիա ծառայություն մատուցողները արդյունավետորեն պահպանեն սույն Հրահանգի դրույթները:

7. Անդամ պետությունները պետք է խրախուսեն ազգային մակարդակում համատեղ կարգավորման եւ (կամ) ինքնակարգավորման ռեժիմների կիրառումը սույն Հրահանգով համակարգվող ոլորտներում՝ այնքանով, որքանով թույլատրվում է իրենց իրավական համակարգերով: Այդ ռեժիմները պետք է լինեն այնպիսին, որ լայնորեն ընդունելի լինեն հիմնական շահառուների կողմից տվյալ անդամ պետություններում եւ նախատեսեն արդյունավետ կիրարկում:

8. Պետք է կիրառվի թիվ 2003/31/ԵՀ հրահանգը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հրահանգով: Թիվ 2000/31/ԵՀ հրահանգի եւ սույն Հրահանգի դրույթների միջեւ հակասությունների դեպքում գերակայում են սույն Հրահանգի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հրահանգով:

ԳԼՈՒԽ III

ԲՈԼՈՐ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 5

Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց իրավազորության ներքո գտնվող տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողները ծառայություն ստացողների համար դյուրամատչելի, անմիջական եւ մշտապես մատչելի դարձնեն առնվազն հետեւյալ տեղեկատվությունը՝

- ա) մեդիա ծառայություն մատուցողի անունը.
- բ) աշխարհագրական հասցեն, որտեղ հիմնադրված է մեդիա ծառայություն մատուցողը.
- գ) մեդիա ծառայություն մատուցողի վերաբերյալ մանրամասներ, այդ թվում՝ նրա էլեկտրոնային փոստի հասցեն կամ կայքէջը, որը հնարավորություն կտա արագ կերպով կապ հաստատելու եւ ուղղակիորեն ու արդյունավետորեն հաղորդակցվելու նրա հետ.
- դ) առկայության դեպքում, կանոնակարգող կամ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինները:

Հոդված 6

Անդամ պետությունները պատշաճ միջոցներով ապահովում են, որ իրենց իրավազրության ներքո գտնվող մեդիա ծառայություն մատուցողների կողմից տրամադրված տեսալսողական մեդիա ծառայությունները չպարունակեն ռասայի, սեռի, կրոնի կամ ազգության հիմքով ատելություն հրահրող որեւէ դրսեւորում:

Հոդված 7

Անդամ պետությունները խրախուսում են իրենց իրավազրության ներքո գտնվող մեդիա ծառայություն մատուցողներին, որպեսզի նրանք իրենց ծառայություններն աստիճանաբար մատչելի դարձնեն տեսողական կամ լսողական հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:

Հոդված 8

Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց իրավազրության ներքո գտնվող մեդիա ծառայություն մատուցողներն իրավատերերի հետ համաձայնեցված ժամկետներից դուրս կինեմատոգրաֆիական ստեղծագործություններ չհեռարձակեն:

Հոդված 9

1. Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց իրավազրության ներքո գտնվող մեդիա ծառայություն մատուցողների կողմից տրամադրվող տեսալսողական առեւտրային հաղորդագրությունները բավարարեն հետեւյալ պահանջները՝

- ա) տեսալսողական առեւտրային հաղորդագրությունը պետք է ցանկացած պահի՝ որպես այդպիսին, ճանաչելի լինի: Թաքնված տեսալսողական առեւտրային հաղորդագրություններն արգելվում են.

- բ) տեսալսողական առեւտրային հաղորդագրություններում չպետք է կիրառվեն ենթագիտակցության վրա ազդող միջոցներ.
- գ) տեսալսողական առեւտրային հաղորդագրությունները չպետք է՝
- i) խաթարեն հարգանքը մարդկային արժանապատվության նկատմամբ.
 - ii) պարունակեն կամ սերմանեն խտրականություն սեռի, ռասայի կամ էթնիկ ծագման, ազգության, կրոնի կամ դավանանքի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման հիմքով.
 - iii) խրախուսեն առողջությունը կամ անվտանգությունը վնասող վարքագիծ.
 - iv) խրախուսեն շրջակա միջավայրի պաշտպանությանը մեծապես հակասող վարքագիծ.
- դ) արգելվում են սիգարետների եւ ծխախոտային այլ արտադրատեսակների մասին բոլոր տեսակի տեսալսողական առեւտրային հաղորդագրությունները.
- ե) ալկոհոլային խմիչքների մասին տեսալսողական առեւտրային հաղորդագրությունները չպետք է ուղղված լինեն կոնկրետ անչափահասներին եւ չպետք է խրախուսեն նման խմիչքների չափից ավելի օգտագործումը.
- զ) արգելվում է միայն դեղատոմսով բաց թողնվող դեղագործական արտադրատեսակների եւ բուժական միջոցների մասին տեսալսողական առեւտրային հաղորդագրությունները մեղիա ծառայություն մատուցողի նկատմամբ իրավազրկություն ունեցող անդամ պետությունում.
- է) տեսալսողական առեւտրային հաղորդագրությունները չպետք է ֆիզիկական կամ բարոյական վնաս հասցնեն անչափահասներին: Ուստի, դրանք չպետք է ուղղակիորեն ներքաշեն անչափահասներին ապրանքների կամ ծառայությունների գնման կամ վարձակալության գործընթացների մեջ՝ չարաշահելով նրանց անփորձությունը կամ դյուրահավատությունը, ուղղակիորեն խրախուսեն նրանց համոզել իրենց ծնողներին կամ այլ

անձանց գնել գովազդվող ապրանքները կամ ծառայությունները, օգտվեն երեխաների հանդեպ՝ ծնողների, ուսուցիչների կամ այլ անձանց ունեցած հատուկ վստահությունից կամ անչափահասներին ոչ խելամիտ կերպով ներքաշեն վտանգավոր իրավիճակների մեջ:

2. Անդամ պետությունները եւ Հանձնաժողովը խրախուսում են մեդիա ծառայություն մատուցողներին մշակել վարքագծի կանոններ՝ մանկական հաղորդումներին կից կամ դրանցում ընդգրկված ոչ պատշաճ տեսալսողական առետրային այն հաղորդագրությունների առնչությամբ, որոնք վերաբերում են սննդային կամ ֆիզիոլոգիական ազդեցությամբ սննդանյութեր եւ նյութեր, մասնավորապես՝ ճարպ, ճարպաթթուների տրանսիզոմերներ, աղ(սոդա) եւ շաքարներ պարունակող սննդամթերքին եւ խմիչքի տեսակներին, որոնց չափից ավելի ընդունումը հիմնական սննդակարգում խորհուրդ չի տրվում:

Հոդված 10

1. Հովանավորվող տեսալսողական մեդիա ծառայությունները կամ հաղորդումները պետք է բավարարեն հետեւյալ պահանջները՝

- ա) ոչ մի պարագայում չպետք է միջամտել դրանց բովանդակությանը, իսկ հեռուստատեսությամբ հեռարձակվելու դեպքում՝ դրանց ժամանակացույցին՝ այնպես, որ ազդեցություն ունենան մեդիա ծառայություն մատուցողի պատասխանատվության եւ խմբագրական անկախության վրա.
- բ) դրանցում չպետք է ուղղակիորեն խրախուսվեն ապրանքների կամ ծառայությունների գնումը կամ վարձակալությունը՝ մասնավորապես, գովազդելու նպատակով հղում կատարելով այդ ապրանքներին կամ ծառայություններին.
- գ) դիտողները պետք է հստակորեն տեղեկացվեն հովանավորության վերաբերյալ համաձայնագրի առկայության մասին: Հովանավորվող հաղորդումները պետք է հստակորեն նույնականացվեն որպես այդպիսին

հովանավորի անվանմամբ, տարբերանշանով եւ (կամ) որեւէ այլ նշանով, ինչպէս, օրինակ՝ հաղորդումների սկզբում, ընթացքում եւ (կամ) վերջում հաղորդումների համար համապատասխան եղանակով հղում կատարելով հովանավորի կողմից առաջարկվող ապրանքին (ապրանքներին) կամ ծառայությանը (ծառայություններին) կամ դրա տարբերակիչ նշանին:

2. Տեսալսողական մեդիա ծառայությունները կամ հաղորդումները չեն հովանավորվում այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնց հիմնական գործունեությունը սիգարետների կամ ծխախոտային այլ արտադրատեսակների արտադրությունն է կամ վաճառքը:

3. Տեսալսողական մեդիա ծառայությունների կամ հաղորդումների հովանավորումն այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնց գործունեությունը ներառում է դեղագործական արտադրատեսակների կամ բուժական միջոցների արտադրություն կամ վաճառք, կարող է գովազդել այդ կազմակերպության անվանումը կամ իմիջը, սակայն որով, տվյալ մեդիա ծառայություններ մատուցողի նկատմամբ իրավազրկություն ունեցող անդամ պետությունում միայն դեղատոմսով բաց թողնվող հատուկ դեղագործական արտադրատեսակները կամ բուժական միջոցները չեն գովազդվում:

4. Լրատվական եւ ընթացիկ գործունեության վերաբերյալ հաղորդումները չեն հովանավորվում: Անդամ պետությունները կարող են իրենց ընտրությամբ արգելել հովանավորի տարբերանշանի ցուցադրումը մանկական հաղորդումներում, փաստավավերագրական ֆիլմերում եւ կրոնական հաղորդումներում:

Հոդված 11

1. 2-րդ, 3-րդ եւ 4-րդ պարբերությունները կիրառվում են միայն 2009 թվականի դեկտեմբերի 19-ից հետո արտադրված հաղորդումների նկատմամբ:

2. Հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունն արգելվում է:

3. Շեղում կատարելով 2-րդ պարբերությունից՝ հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրությունն ընդունելի է հետեւյալ դեպքերում, եթե անդամ պետությունն այլ բան չի որոշում՝

ա) տեսալսողական մեդիա ծառայությունների մատուցման նպատակով ստեղծված կինեմատոգրաֆիական ստեղծագործություններում, ֆիլմերում ու սերիալներում, սպորտային եւ թեթեւ ժամանցային հաղորդումներում.

բ) եթե չի պահանջվում որեւէ վճար, այլ պարզապես անվճար տրամադրվում են որոշակի ապրանքներ կամ ծառայություններ (ինչպիսիք արտադրանքի ռեկվիզիտները եւ մրցանակներն են)՝ հաղորդման մեջ դրանք ներառելու նպատակով:

(ա) կետով նախատեսված շեղումը չի կիրառվում մանկական հաղորդումների նկատմամբ:

Հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրություն պարունակող հաղորդումները պետք է բավարարեն առնվազն հետեւյալ բոլոր պահանջները՝

ա) ոչ մի պարագայում չպետք է միջամտել դրանց բովանդակությանը, իսկ հեռուստատեսությամբ հեռարձակվելու դեպքում՝ դրանց ժամանակացույցին այնպես, որ ազդեցություն ունենան մեդիա ծառայություն մատուցողի պատասխանատվության եւ խմբագրական անկախության վրա.

բ) դրանցում չպետք է ուղղակիորեն խրախուսվեն ապրանքների կամ ծառայությունների գնումը, կամ վարձակալությունը, մասնավորապես, գովազդելով այդ ապրանքները կամ ծառայությունները.

գ) դրանք չպետք է անհարկի գովազդեն տվյալ ապրանքը.

դ) դիտողները պետք է հստակորեն տեղեկացված լինեն հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրության առկայության մասին: Հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրություն պարունակող հաղորդումները պետք է պատշաճ կերպով տարբերակվեն հաղորդման

սկզբում եւ վերջում ու գովազդային դադարից հետո հաղորդումը վերսկսվելիս, որպեսզի դիտողը շփոթության մեջ չընկնի:

Բացառության կարգով՝ անդամ պետությունները կարող են հրաժարվել (դ) կետով սահմանված պահանջներից՝ պայմանով, որ տվյալ հաղորդումը ո՛չ արտադրվել է, ո՛չ պատվիրվել ինքնին մեդիա ծառայություններ մատուցողի կամ մեդիա ծառայություններ մատուցողի հետ փոխկապակցված ընկերության կողմից:

4. Ամեն դեպքում, հաղորդումները չպետք է հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրություն պարունակեն՝

ա) ծխախոտային արտադրատեսակների կամ սիգարետների վերաբերյալ կամ հիմնականում սիգարետների եւ այլ ծխախոտային արտադրատեսակների արտադրությամբ կամ վաճառքով զբաղվող կազմակերպությունների կողմից հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրություն,

բ) մեդիա ծառայություն մատուցողի նկատմամբ իրավազրկություն ունեցող անդամ պետությունում միայն դեղատոմսով բաց թողնվող հատուկ դեղագործական արտադրատեսակների եւ բուժական միջոցների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ IV

ՄԻԱՅՆ ՊԱՏՎԵՐՈՎ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 12

Անդամ պետությունները ձեռնարկում են պատշաճ միջոցներ՝ ապահովելու, որ իրենց իրավազրկության ներքո գտնվող՝ մեդիա ծառայություններ մատուցողի կողմից տրամադրվող պատվերով տեսալսողական մեդիա ծառայությունները, որոնք կարող են լուրջ վնաս հասցնել անչափահասների ֆիզիկական, մտավոր կամ բարոյական զարգացմանը, մատչելի լինեն միայն այնպիսի եղանակով, որ

անչափահասները չլսեն կամ չտեսնեն այդպիսի պատվերով տեսալսողական մեդիա ծառայություններ:

Հոդված 13

1. Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց իրավագործության ներքո գտնվող մեդիա ծառայություններ մատուցողների կողմից տրամադրվող տեսալսողական մեդիա ծառայությունները, հնարավորության դեպքում եւ համապատասխան միջոցներով, խթանեն եվրոպական ստեղծագործությունների արտադրությունն ու մատչելիությունը: Այդպիսի խթանը կարող է վերաբերել, մասնավորապես, այդպիսի ծառայություններով կատարվող ֆինանսական ներդրմանը՝ եվրոպական ստեղծագործությունների արտադրության եւ դրանց նկատմամբ իրավունքներ ձեռք բերելու գործընթացի մեջ կամ պատվերով տեսալսողական մեդիա ծառայություններով առաջարկվող հաղորդումների ծրագրում առկա եվրոպական ստեղծագործությունների ծավալի եւ (կամ) գովազդման մեջ:

2. Անդամ պետությունները զեկուցում են Հանձնաժողովին 1-ին պարբերության կիրարկման մասին 2011 թվականի դեկտեմբերի 19-ից ոչ ուշ, իսկ դրանից հետո՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ:

3. Հանձնաժողովը, հիմնվելով անդամ պետությունների կողմից տրամադրված տեղեկատվության եւ անկախ ուսումնասիրության վրա, զեկուցում է եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին 1-ին պարբերության կիրառման մասին՝ հաշվի առնելով շուկայական եւ տեխնոլոգիական զարգացումները, ինչպես նաեւ մշակութային բազմազանության նպատակը:

ԳԼՈՒԽ V

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ՝ ԲԱՅԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 14

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է, Միության իրավունքին համապատասխան, ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար, որ իր իրավազորության ներքո գտնվող հեռարձակողները բացառիկ հիմունքներով չհեռարձակեն՝ հասարակության համար ըստ այդ անդամ պետության առանձնակի կարելիություն ունեցող միջոցառումներն այնպես, որ այդ անդամ պետության տարածքում հանրության զգալի զանգվածը զրկվի այդ միջոցառումներին անվճար հեռուստատեսությամբ՝ ուղիղ հեռարձակմամբ կամ տեսաձայնագրությամբ հետելելու հնարավորությունից: Նման դեպքերում, տվյալ անդամ պետությունը կազմում է ազգային կամ ոչ ազգային նախանշված միջոցառումների ցանկ, որոնք, այն համարում է հասարակության համար առանձնակի կարելիություն ունեցող: Այն դա կատարում է հստակ եւ թափանցիկ ձեռով՝ պատշաճ ժամկետում: Նման դեպքում, տվյալ անդամ պետությունը որոշում է նաեւ, թե արդյոք տվյալ միջոցառումները պետք է մատչելի լինեն ամբողջական կամ մասնակի ուղիղ հեռարձակմամբ, թե, ելնելով հանրային շահով պայմանավորված օբյեկտիվ պատճառներից՝ ամբողջական կամ մասնակի տեսաձայնագրության հեռարձակմամբ:

2. Անդամ պետություններն անմիջապես ծանուցում են Հանձնաժողովին ձեռնարկված կամ ձեռնարկվելիք բոլոր միջոցների մասին՝ 1-ին պարբերության համաձայն: Ծանուցումից հետո երեք ամսվա ընթացքում Հանձնաժողովը հաստատում է այդ միջոցների համապատասխանությունը Միության իրավունքին եւ դրա մասին հաղորդում մյուս անդամ պետություններին: Այն ակնկալում է ստանալ 29-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ փոխադարձ կապն ապահովող կոմիտեի եզրակացությունը: Այն ձեռնարկված միջոցների մասին անհապաղ, եւ անդամ

պետությունների կողմից ձեռնարկված միջոցների համախմբված ցանկը առնվազն տարին մեկ անգամ հրապարակում է *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*:

3. Անդամ պետությունները, իրենց օրենսդրության շրջանակներում ձեռնարկելով պատշաճ միջոցներ, ապահովում են, որ իրենց իրավագրության ներքո գտնվող հեռարձակողները չիրականացնեն 2007 թվականի դեկտեմբերի 18-ից հետո այդ հեռարձակողներից գնված բացառիկ իրավունքներն այնպես, որ այլ անդամ պետության հանրության զգալի մասը զրկվի այդ անդամ պետության կողմից 1-ին եւ 2-րդ պարբերություններին համապատասխան նախանշված միջոցառումներին անվճար հեռուստատեսությամբ՝ամբողջական կամ մասնակի ուղիղ հեռարձակմամբ, կամ, եթե դա անհրաժեշտ է, հանրային շահերից բխող օբյեկտիվ պատճառներով կամ համապատասխանում է դրանց, ամբողջական կամ մասնակի տեսաձայնագրությամբ հետեւելու հնարավորությունից՝ ինչպես սահմանված է այդ մյուս անդամ պետության կողմից՝ 1-ին պարբերությանը համապատասխան:

Հոդված 15

1. Անդամ պետություններն ապահովում են, որ համառոտ լրատվական ռեպորտաժների պատրաստման նպատակով Միությունում հիմնադրված ցանկացած հեռարձակողի համար արդարացի, հիմնավոր ու ոչ խտրական հիմունքներով մատչելի լինեն հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող այն միջոցառումները, որոնք բացառիկ հիմունքներով հեռարձակում է իրենց իրավագրության ներքո գտնվող հեռարձակողը:

2. Եթե միեւնույն անդամ պետությունում հիմնադրված մեկ այլ հեռարձակող օգտագործման հնարավորության ձգտելիս բացառիկ իրավունքներ է ձեռք բերել հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների նկատմամբ, ապա օգտագործման հնարավորություն պետք է հայցել այդ հեռարձակողից:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ այդպիսի օգտագործման հնարավորությունը երաշխավորվի՝ թույլ տալով հեռարձակողներին ազատորեն ընտրել հեռարձակողի ազդանշանից կարճ հատվածներ՝ գործնականորեն հնարավոր լինելու դեպքում, առնվազն դրանց աղբյուրը որոշելով:

4. Որպես 3-րդ պարբերության այլընտրանքային միջոց՝ անդամ պետությունները կարող են հաստատել համարժեք մի համակարգ, որտեղ արդարացի, հիմնավոր ու ոչ խտրական հիմունքներով օգտագործման հնարավորություն է ձեռք բերվում այլ միջոցներով:

5. Կարճ հատվածներն օգտագործվում են միայն ընդհանուր լրատվական հաղորդումներում, իսկ պատվերով տեսալսողական մեդիա ծառայություններում կարող են օգտագործվել միայն այն դեպքում, երբ միեւնույն հաղորդումը միեւնույն մեդիա ծառայություններ մատուցողի կողմից առաջարկվում է տեսաձայնագրությամբ:

6. Չհակասելով 1-5-րդ պարբերության դրույթներին՝ անդամ պետությունները, իրենց իրավական համակարգերին եւ գործելակերպերին համապատասխան, ապահովում են, որ սահմանվեն նման կարճ հատվածների տրամադրմանն առնչվող մեթոդները եւ պայմանները, մասնավորապես՝ ցանկացած փոխհատուցման միջոցի, կարճ հատվածների առավելագույն տեւողության եւ դրանց հեռարձակման ժամկետների առնչությամբ: Եթե նախատեսվում է փոխհատուցում, այն չի կարող գերազանցել օգտագործման հնարավորության տրամադրման համար ուղղակիորեն կատարված լրացուցիչ ծախսերը:

ԳԼՈՒԽ VI

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

Հոդված 16

1. Անդամ պետությունները, հնարավորության դեպքում եւ համապատասխան միջոցների կիրառմամբ, ապահովում են, որ հեռարձակողներն իրենց եթերաժամի մեծ մասը հատկացնեն եվրոպական արտադրության հաղորդումներին՝ բացառելով լրատվական հաղորդումներին, սպորտային միջոցառումներին, խաղերին, գովազդին, տելետեքստային ծառայություններին եւ հեռուստաշուկային հատկացվող առավելագույն եթերաբաժինը: Հաշվի առնելով հեռարձակողի՝ իր լսարանին տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումներով ապահովելու պարտականությունները՝ այս եթերաբաժինը պետք է ապահովվի աստիճանաբար՝ համապատասխան չափորոշիչների հիման վրա:

2. Եթե 1-ին պարբերությամբ սահմանված եթերաբաժինը հնարավոր չէ ապահովել, ապա այն չպետք է ցածր լինի տվյալ անդամ պետությունում 1988 թվականին ապահովված միջինից:

Այնուամենայնիվ, Հունաստանի եւ Պորտուգալիայի առնչությամբ 1988 թվականը փոխարինվում է 1990 թվականով:

3. 1991 թվականի հոկտեմբերի 3-ից սկսած անդամ պետությունները յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ Հանձնաժողով զեկույց են ներկայացնում սույն հոդվածի եւ 17-րդ հոդվածի կիրառության մասին:

Այդ զեկույցը պետք է ներառի հատկապես վիճակագրական հաշվետվություն՝ տվյալ անդամ պետության իրավագործության ներքո գտնվող հեռուստահաղորդումներից յուրաքանչյուրի մասով՝ սույն հոդվածով եւ 17-րդ հոդվածով նախատեսված եթերաբաժնի ձեռքբերման մասին եւ, յուրաքանչյուր դեպքում, այդ եթերաբաժինը ձեռք չբերելու պատճառներն ու դրա նպատակով սահմանվող կամ նախատեսվող միջոցները:

Հանձնաժողովը տեղեկացնում է մյուս անդամ պետություններին եւ Եվրոպական պառլամենտին զեկույցների մասին, որոնց, հարկ եղած դեպքում, կցվում է եզրակացություն: Հանձնաժողովն ապահովում է սույն հոդվածի եւ 17-րդ հոդվածի կիրառությունը՝ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի դրույթներին համապատասխան: Հանձնաժողովը կարող է իր եզրակացության մեջ հաշվի առնել, մասնավորապես, նախորդ տարիների համեմատ ձեռք բերված առաջընթացը, ծրագրերում առաջին հեռարձակվող ստեղծագործություններին հատկացված եթերաժամը, նոր հեռուստահաղորդողների հատուկ հանգամանքները եւ հատուկ դրությունն այն երկրներում, որոնք ունեն տեսալսողական արտադրության փոքր հնարավորություններ, կամ որոնք սահմանափակված են առանձին լեզվական տարածքով:

Հոդված 17

Անդամ պետությունները, հնարավորության դեպքում եւ համապատասխան միջոցների կիրառմամբ, ապահովում են, որ հեռարձակողները պահպանեն իրենց եթերային ժամանակի առնվազն 10 տոկոսը՝ չհաշված լրատվական հաղորդումներին, սպորտային միջոցառումներին, խաղերին, գովազդին, տելետեքստային ծառայություններին եւ հեռուստաշուկային հատկացվող ժամանակը, կամ փոխարենը, անդամ պետության հայեցողությամբ՝ իրենց ծրագրային բյուջեի առնվազն 10 տոկոսը հատկացնեն հեռարձակողներից անկախ գործող արտադրողների ստեղծած եվրոպական ստեղծագործություններին: Հաշվի առնելով հեռարձակողի՝ իր լսարանին տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումներով ապահովելու պարտականությունները՝ այդ եթերաբաժինը պետք է ապահովվի աստիճանական կարգով՝ համապատասխան չափորոշիչների հիման վրա: Դա պետք է իրականացվի համարժեք եթերաբաժին հատկացնելով վերջին ստեղծագործություններին, այսինքն՝ դրանց արտադրության հինգ տարվա ընթացքում հեռարձակված ստեղծագործություններին:

Հոդված 18

Սույն Գլուխը չի կիրառվում այն հեռուստահաղորդումների նկատմամբ, որոնք նախատեսված են տեղական լսարանների համար, եւ որոնք ազգային ցանցի մաս չեն կազմում:

ԳԼՈՒԽ VII

ՀԵՌՈՒՍՏԱԳՈՎԱԶԴԸ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՇՈՒԿԱՆ

Հոդված 19

1. Հեռուստագովազդը եւ հեռուստաշուկան պետք է ցանկացած պահի ճանաչելի եւ տարբերակելի լինեն խմբագրական բովանդակությունից: Չսահմանափակելով նոր գովազդային մեթոդների գործածությունը՝ հեռուստագովազդը եւ հեռուստաշուկան պետք է ամբողջովին առանձնացվեն հաղորդման մյուս մասերից տեսաշարային եւ (կամ) ծայնային (ակուստիկական) եւ (կամ) տարածական միջոցներով:

2. Բացառություն են կազմում առանձնացված գովազդային եւ հեռուստաշուկայի ընդհատումները, որոնք չեն տեղադրվում սպորտային միջոցառումների հեռարձակումներում:

Հոդված 20

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հաղորդումների ընթացքում հեռուստագովազդ կամ հեռուստաշուկա տեղադրելիս չխաթարվի հաղորդումների ամբողջականությունը՝ հաշվի առնելով հաղորդման մեջ տեղ գտնող սովորական ընդմիջումները եւ տվյալ հաղորդման տեսողությունն ու բնույթը, եւ որ չսահմանափակվեն իրավատերերի իրավունքները:

2. Հեռուստատեսության համար պատրաստված ֆիլմերը (բացառությամբ բազմասերիանոց ֆիլմերի, սերիալների եւ վավերագրական ֆիլմերի), կինեմատոգրաֆիական ստեղծագործությունները եւ լրատվական հաղորդումները կարող են ընդհատվել հեռուստագովազդով եւ (կամ) հեռուստաշուկայով յուրաքանչյուր սահմանված ժամանակահատվածում առնվազն երեսուն րոպեն մեկ անգամ: Հեռարձակվող մանկական հաղորդումները կարող են ընդհատվել հեռուստագովազդով եւ (կամ) հեռուստաշուկայով յուրաքանչյուր սահմանված ժամանակահատվածում առնվազն երեսուն րոպեն մեկ անգամ, եթե հաղորդման տևողությունը 30 րոպեից ավելի է: Կրոնական ծիսակատարությունների հեռարձակումը չպետք է ընդհատվի հեռուստագովազդով կամ հեռուստաշուկայով:

Հոդված 21

Արգելվում է հեռուստաշուկան այն դեղագործական արտադրատեսակների համար, որոնք ենթակա են շուկայահանման թույլտվության՝ թիվ 2001/83/ԵՀ հրահանգի իմաստով, ինչպես նաեւ հեռուստաշուկան՝ բուժական միջոցների համար:

Հոդված 22

Ալկոհոլային խմիչքների հեռուստագովազդը եւ հեռուստաշուկայով առաջարկը պետք է համապատասխանեն հետեւյալ չափորոշիչներին՝

- ա) չեն կարող ուղղված լինել հատկապես անչափահասներին կամ, մասնավորապես, ցուցադրվել այդպիսի խմիչքներ սպառող անչափահասներին.
- բ) դրանք ալկոհոլի սպառումը չպետք է կապեն բարձրացող ֆիզիկական աշխատունակության կամ մեքենա վարելու հետ.
- գ) չպետք է ստեղծեն այնպիսի տպավորություն, որ ալկոհոլի սպառումը նպաստում է սոցիալական կամ սեռական հաջողությանը.

- դ) դրանք չպետք է պնդեն, որ ակոհոլը օժտված է բուժական հատկություններով, կամ որ այն խթանիչ, հանգստացնող կամ անձնական խնդիրներին լուծում տվող միջոց է.
- ե) դրանցում չպետք է խրախուսվի ակոհոլի չափից ավելի օգտագործումը, կամ բացասական լույսի ներքո ներկայացվի ինքնազսպումը կամ չափավորությունը.
- զ) դրանցում չպետք է շեշտվի, որ սպիրտի բարձր պարունակությունը վկայում է խմիչքի բարձր որակի մասին:

Հոդված 23

1. Հեռուստագովազդի ընդհատումների եւ հեռուստաշուկայի ընդհատումների եթերաբաժինը չպետք է գերազանցի նախատեսված ժամերի 20%-ը:

2. 1-ին պարբերությունը չի կիրառվում հեռարձակողի կողմից արվող՝ իր իսկ հաղորդումների եւ այդ հաղորդումներից ուղղակիորեն ստացվող օժանդակ արտադրանքի հետ կապված հայտարարությունների, հովանավորների հայտարարությունների եւ հովանավորի տրամադրած ապրանքի ցուցադրության նկատմամբ:

Հոդված 24

Հեռուստաշուկայի «պատուհանները» պետք է հստակորեն տարբերակվեն տեսաշարային ու ձայնային (ակուստիկական) միջոցներով, եւ դրանց անընդմեջ տեւողությունը պետք է կազմի առնվազն տասնհինգ րոպե:

Հոդված 25

Սույն Հրահանգը համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) կիրառվում է բացառապես գովազդին եւ հեռուստաշուկային, ինչպես նաեւ ինքնագովազդին նվիրված հեռուստաալիքների նկատմամբ:

Այնուամենայնիվ, VI գլուխը, ինչպես նաեւ 20-րդ եւ 23-րդ հոդվածները չեն կիրառվում այդ հեռուստաալիքների նկատմամբ:

Հոդված 26

Չհակասելով 4-րդ հոդվածի դրույթներին՝ անդամ պետությունները, պատշաճ կերպով հաշվի առնելով Միության իրավունքը, կարող են սահմանել 20(2) եւ 23-րդ հոդվածներով սահմանված պայմաններից տարբեր այլ պայմաններ այն հեռուստահաղորդումների նկատմամբ, որոնք նախատեսված են բացառապես ազգային տարածքում հեռարձակման համար եւ չեն կարող ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել հանրության կողմից մեկ կամ մի քանի այլ անդամ պետություններում:

ԳԼՈՒԽ VIII

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌՈՒՍՏԱՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՄԵՋ

Հոդված 27

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ իրենց իրավագործության ներքո գտնվող հեռարձակողների կողմից իրականացվող հեռուստահեռարձակումներում չընդգրկվեն այնպիսի հաղորդումներ, որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ անչափահասների ֆիզիկական,

մտավոր կամ բարոյական զարգացման վրա, հատկապես՝ պոռնկագրություն կամ անհիմն բռնություն պարունակող հաղորդումներ:

2. 1–ին պարբերությամբ նախատեսված միջոցները տարածվում են նաեւ այլ հաղորդումների վրա, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ անչափահասների ֆիզիկական, մտավոր կամ բարոյական զարգացման վրա՝ բացառությամբ, երբ հեռարձակման ժամի ընտրության կամ որեւէ այլ տեխնիկական միջոցով ապահովվում է, որ հեռարձակման տարածքում անչափահասները չլսեն կամ չդիտեն այդպիսի հաղորդումներ:

3. Բացի դրանից՝ երբ նման հաղորդումները հեռարձակվում են ոչ կողավորված ձեով, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ դրանց նախորդի ձայնային (ակուստիկական) նախազգուշացում, կամ դրանք տարբերակվեն իրենց ամբողջ տեսողության ընթացքում առկա տեսողական նշանով:

ԳԼՈՒԽ IX

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԵՌՈՒՍՏԱՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՄԵՋ

Հոդված 28

1. Չհակասելով քաղաքացիական, վարչական կամ քրեական իրավունքի համաձայն անդամ պետությունների կողմից ընդունված մյուս դրույթներին՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի օրինական շահերին, մասնավորապես հեղինակությանը եւ բարի համբավին վնաս է հասցվել հեռուստահաղորդման մեջ ոչ ճիշտ փաստերի հաստատմամբ, անկախ քաղաքացիությունից, ունի պատասխանի իրավունք կամ պաշտպանության համարժեք միջոցներից օգտվելու իրավունք: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պատասխանի իրավունքի կամ պաշտպանության համարժեք միջոցներից օգտվելու իրավունքի իրականացումը չխոչընդոտվեն անհարկի ժամկետների կամ պայմանների սահմանմամբ: Պատասխանը պետք է հեռարձակվի

ողջամիտ ժամկետում՝ հիմնավորված պահանջից հետո եւ այն հաղորդման համար համապատասխան ժամկետում եւ ձեով, որին ուղղված է տվյալ պահանջը:

2. Պատասխանի կամ պաշտպանության համարժեք միջոցների իրավունքը կիրառվում է անդամ պետության իրավազորության ներքո գտնվող բոլոր հեռարձակողների նկատմամբ:

3. Անդամ պետությունները սահմանում են պատասխանի իրավունքի կամ պաշտպանության համարժեք միջոցների սահմանման համար անհրաժեշտ միջոցներ եւ որոշում դրանց հետեւելու ընթացակարգը: Մասնավորապես, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հատկացվի բավարար ժամանակամիջոց, եւ ընթացակարգերը լինեն այնպիսին, որ այլ անդամ պետություններում բնակվող կամ հիմնադրված ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կարողանան պատշաճ կերպով իրականացնել այդ իրավունքը կամ պաշտպանության համարժեք միջոցները:

4. Պատասխանի իրավունքի կամ պաշտպանության համարժեք միջոցների իրականացման համար դիմումը կարող է մերժվել, եթե այդ պատասխանը հիմնավորված չէ 1-ին պարբերությամբ սահմանված պայմաններին համապատասխան, պարունակում է պատժելի արարք, հեռարձակողի համար առաջացնում է պատասխանատվություն՝ քաղաքացիական վարույթներում կամ սահմանազանցում է հանրային կարգի նորմերը:

5. Պետք է սահմանվի դրույթ այնպիսի ընթացակարգերի համար, որոնց միջոցով պատասխանի իրավունքի կամ պաշտպանության համարժեք միջոցների իրականացման հետ կապված վեճերը կարող են վերանայվել դատական կարգով:

ԳԼՈՒԽ X

ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԿՈՄԻՏԵՆ

Հոդված 29

1. Փոխադարձ կապն ապահովող կոմիտեն ստեղծվում է Հանձնաժողովի հովանու ներքո: Այն կազմված է անդամ պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչներից: Այն նախագահում է Հանձնաժողովի ներկայացուցիչներից մեկը, եւ դրա նիստերը գումարվում են նրա նախաձեռնությամբ կամ որեւէ անդամ պետության պատվիրակության պահանջի առկայության դեպքում:

2. Փոխադարձ կապն ապահովող կոմիտեի խնդիրներն են՝

- ա) նպաստել սույն Հրահանգի արդյունավետ կիրարկման գործընթացին՝ դրա, մասնավորապես 2-րդ հոդվածի կիրառման ընթացքում առաջացած գործնական խնդիրների, ինչպես նաեւ այնպիսի հարցերի շուրջ անցկացվող պարբերական խորհրդատվություն տրամադրելու միջոցով, որոնց վերաբերյալ տեսակետներն օգտակար են համարվում.
- բ) ներկայացնել իր իսկ նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի պահանջով կազմված եզրակացություններ՝ անդամ պետությունների կողմից սույն Հրահանգը կիրառելու վերաբերյալ.
- գ) հանդես գալ որպես հարթակ՝ անդամ պետությունների կողմից 16(3) հոդվածի համաձայն ներկայացվող զեկույցներում քննարկվելիք հարցերի եւ դրանց մեթոդաբանության վերաբերյալ տեսակետներ փոխանակելու համար,
- դ) քննարկել հեռարձակող կազմակերպությունների ներկայացուցիչների, պրոդյուսերների, սպառողների, արտադրողների, ծառայություն մատուցողների, արհեստակցական միությունների եւ ստեղծագործական համայնքի հետ պարբերաբար անցկացվող խորհրդատվությունների արդյունքը.

- ե) նպաստել անդամ պետությունների եւ Հանձնաժողովի միջեւ՝ տեսալսողական մեդիա ծառայություններին առնչվող կարգավորիչ գործունեության վիճակի եւ զարգացման մասին տեղեկատվության փոխանակմանը՝ հաշվի առնելով Միությունում գործող տեսալսողական քաղաքականությունը, ինչպես նաեւ՝ տեխնիկական ոլորտի համապատասխան զարգացումները.
- զ) ուսումնասիրել այդ ոլորտում առաջացող ցանկացած զարգացում, որի դեպքում տեսակետների փոխանակումն օգտակար է համարվում:

ԳԼՈՒԽ XI

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հոդված 30

Անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ՝ միմյանց եւ Հանձնաժողովին՝ սույն Հրահանգի, մասնավորապես՝ դրա 2-րդ, 3-րդ եւ 4-րդ հոդվածների կիրառության համար անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ, հատկապես իրենց իրավասու անկախ կարգավորող մարմինների միջոցով:

ԳԼՈՒԽ XII

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 31

Սույն Հրահանգով համակարգվող ոլորտներից դուրս այն չի ազդում անդամ պետությունների՝ հեռահաղորդակցության կամ հեռարձակման վերաբերյալ գործող կոնվենցիաներից ծագող իրավունքների եւ պարտավորությունների վրա:

Հոդված 32

Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են այն ոլորտում, որի վրա տարածվում է սույն Հրահանգը:

Հոդված 33

Ոչ ուշ, քան մինչեւ 2011 թվականի դեկտեմբերի 19-ը եւ դրանից հետո յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ, Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ ու Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտե է ներկայացնում սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ զեկույց, եւ, անհրաժեշտության դեպքում՝ տեսալսողական մեդիա ծառայությունների ոլորտում արձանագրված զարգացումներին Հրահանգը համապատասխանեցնելու մասին առաջարկներ, մասնավորապես՝ բոլոր անդամ պետություններում վերջին տեխնոլոգիական զարգացումների, ոլորտի մրցունակության եւ լրատվական գրագիտության մակարդակների լույսի ներքո:

Այդ զեկույցում պետք է գնահատվի նաեւ մանկական հաղորդումներին ուղեկցող կամ դրանցում ներառված հեռուստագովազդի հարցը, եւ, մասնավորապես՝ արդյոք սույն Հրահանգում ներառված քանակական եւ որակական նորմերով ապահովվել է պաշտպանության պահանջվող մակարդակը:

Հոդված 34

Ի հավելվածի Ա մասում թվարկված հրահանգով փոփոխված թիվ 89/552/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով Ի հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունք փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգին կատարված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին կատարված հղումներ եւ պետք է ընթերցվեն ըստ II հավելվածով նախատեսված հարաբերակցական աղյուսակի:

Հոդված 35

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 36

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2010 թվականի մարտի 10-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Ժ. ԲՈՒՋԵԿ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Դ. ԼՈՊԵՋ ԳԱՐՐԻԴՈ

(¹) Եվրոպական պառլամենտի 2009 թվականի հոկտեմբերի 20-ի դիրքորոշում (դեռեա չհրապարակված Պաշտոնական տեղեկագրում) եւ Խորհրդի 2010 թվականի փետրվարի 15-ի որոշում:

(²) ՊՏ L 298, 17.10.1989թ., էջ 23: Ակտի բնօրինակ անվանումն էր՝ ««Հեռուստահեռարձակման գործունեության իրականացման վերաբերյալ անդամ պետությունների իրավունքով, կանոնակարգով կամ վարչական ակտով սահմանված որոշակի դրույթների համակարգման մասին» Խորհրդի 1989 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 89/552/ԵՏՀ հրահանգ»:

(³) Տե՛ս Հավելված I, Մաս Ա:

(⁴) ՊՏ C 285 E, 22.11.2006թ., էջ 126:

(⁵) ՊՏ C 293 E, 02.12.2006թ., էջ 155:

(⁶) ՊՏ C 296 E, 06.12.2006թ., էջ 104:

(⁷) ՊՏ L 201, 25.07.2006թ., էջ 15:

(⁸) ՊՏ C 30, 05.02.1999թ., էջ 1:

(⁹) Եվրոպական պառլամենտի բանաձեւ «Առանց սահմանների հեռուստատեսության մասին» (ՊՏ C 76 E, 25.03.2004թ., էջ 453):

(¹⁰) Եվրոպական պառլամենտի բանաձեւ «Եվրոպական միությունում եւ, հատկապես՝ Իտալիայում արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության ոտնահարման վտանգների մասին» («Հիմնարար իրավունքների մասին» խարտիայի 11(2) հոդված) (ՊՏ C 104 E, 30.04.2004թ., էջ 1026):

(¹¹) Եվրոպական պառլամենտի բանաձեւ 2001-2002 թթ. ժամանակահատվածի համար «թիվ 97/36/ԵՀ հրահանգով փոփոխված թիվ 89/552/ԵՏՀ հրահանգի 4-րդ եւ 5-րդ հոդվածների կիրառության մասին (Հեռուստատեսություն առանց սահմանների)» (ՊՏ C 193 E, 17.08.2006թ., էջ 117):

(¹²) ՊՏ C 364, 18.12.2000թ., էջ 1:

(¹³) ՊՏ L 204, 21.07.1998թ., էջ 37:

(¹⁴) ՊՏ L 332, 18.12.2007թ., էջ 27:

(¹⁵) ՊՏ L 108, 24.04.2002թ., էջ 33:

(¹⁶) ՊՏ L 178, 17.07.2000թ., էջ 1:

(¹⁷) Գործ թիվ C-56/96 *Ltd v Vlaamse Gemeenschap* [1997] ECR I-3143, 22-րդ պարբերություն. գործ թիվ C-212/97 *Centros v Erhvervs-og Selskabsstyrelsen* [1999] ECR I-1459, տե՛ս նաև՝ գործ թիվ C-11/95 *Commission v Belgium* [1996] ECR I-4115 եւ գործ թիվ C-14/96 *Paul Denuit* [1997] ECR I-2785:

(¹⁸) վերը նշված գործ թիվ C-212/97 *Centros v Erhvervs-og Selskabsstyrelsen*. գործ թիվ 33/74 *Van Binsbergen v Bestuur van de Bedrijfsvereniging* [1974] ECR 1299. գործ թիվ C-23/93 *TV 10 SA v Commissariaat voor de Media* [1994] ECR I-4795, 21-րդ պարբերություն:

(¹⁹) Գործ թիվ C-355/98 [2000] ECR I-1221, 28-րդ պարբերություն. գործ թիվ C-348/96 *Calfa* [1999] ECR I-11, 23-րդ պարբերություն:

(²⁰) ՊՏ L 378, 27.12.2006թ., էջ 72:

(²¹) ՊՏ L 202, 30.07.1997թ., էջ 60:

(²²) ՊՏ L 167, 22.06.2001թ., էջ 10:

(²³) Գործ թիվ C-89/04 *Mediakabel BV v Commissariaat voor de Media* [2005] ECR I-4891:

(²⁴) ՊՏ L 13, 20.01.2004թ., էջ 44:

(²⁵) ՊՏ C 102, 28.04.2004թ., էջ 2:

(²⁶) ՊՏ L 149, 11.06.2005թ., էջ 22:

(²⁷) ՊՏ L 152, 20.06.2003թ., էջ 16:

(²⁸) ՊՏ L 311, 28.11.2001թ., էջ 67:

(²⁹) ՊՏ L 404, 30.12.2006թ., էջ 9:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՄԱՍ Ա

Ուժը կորցրած ճանաչված հրահանգն իր հետագա փոփոխությունների ցանկով

(նախատեսված են 34-րդ հոդվածով)

Խորհրդի թիվ 89/552/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 298, 17.10.1989թ., էջ 23)	
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 97/36/ԵՀ հրահանգ (ՊՏ L 202, 30.07.1997թ., էջ 60)	
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2007/65/ԵՀ հրահանգ (ՊՏ L 332, 18.12.2007թ., էջ 27)	միայն 1-ին հոդված

ՄԱՍ Բ

Ազգային իրավունք փոխատեղելու ժամկետների ցանկը

(նախատեսված է 34-րդ հոդվածով)

Հրահանգ	Փոխատեղման ժամկետը
Թիվ 89/552/ԵՏՀ	1991 թվականի հոկտեմբերի 3
Թիվ 97/36/ԵՀ	1998 թվականի դեկտեմբերի 31
Թիվ 2007/65/ԵՀ	2009 թվականի դեկտեմբերի 19

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Թիվ 89/552/ԵՏՀ հրահանգ	Սույն հրահանգը
1-ին հոդված, ներածական մաս	1(1) հոդված, ներածական մաս
1(ա) հոդված, ներածական մաս	1(1)(ա) հոդված, ներածական մաս
1(ա) հոդված, առաջին պարբերույթ	1(1)(ա)(i) հոդված
1(ա) հոդված, երկրորդ պարբերույթ	1(1)(ա)(ii) հոդված
1(բ)-(ժգ) հոդված	1(1)(բ)-(ժգ) հոդված
1(ժդ)(i) հոդված, ներածական մաս	1(1)(ժդ) հոդված, ներածական մաս
1(ժդ)(i) հոդված, առաջին պարբերույթ	1(1)(ժդ)(i) հոդված
1(ժդ)(i) հոդված, երկրորդ պարբերույթ	1(1)(ժդ)(ii) հոդված
1(ժե)(i) հոդված, երրորդ պարբերույթ	1(1)(ժե)(iii) հոդված
1(ժդ)(i) հոդված, չորրորդ պարբերույթ	1(2) հոդված
1(ժդ)(ii) հոդված, ներածական մաս	1(3) հոդված, ներածական մաս
1(ժդ)(ii) հոդված, առաջին պարբերույթ	1(3)(i) հոդված
1(ժդ)(ii) հոդված, երկրորդ պարբերույթ	1(3)(ii) հոդված
1(ժդ)(ii) հոդված, երրորդ պարբերույթ	1(3)(iii) հոդված
1(ժդ)(iii) հոդված	1(4) հոդված
2-րդ հոդված	2-րդ հոդված
2ա(1), (2) եւ (3) հոդված	3(1), (2) եւ (3) հոդված
2ա(4) հոդված, ներածական մաս	3(4) հոդված, ներածական մաս
2ա(4)(ա) հոդված	3(4)(ա) հոդված
2ա(4)(բ) հոդված, ներածական մաս	3(4)(բ) հոդված, ներածական մաս

2ա(4)(բ) հոդված, առաջին պարբերույթ	3(4)(բ)(i) հոդված
2ա(4)(բ) հոդված, երկրորդ պարբերույթ	3(4)(բ)(ii) հոդված
2ա(5) եւ (6) հոդված	3(5) եւ (6) հոդված
3-րդ հոդված	4-րդ հոդված
3ա հոդված	5-րդ հոդված
3բ հոդված	6-րդ հոդված
3գ հոդված	7-րդ հոդված
3դ հոդված	8-րդ հոդված
3ե հոդված	9-րդ հոդված
3զ հոդված	10-րդ հոդված
3է(1) հոդված	11(2) հոդված
3է(2) հոդված, առաջին ենթապարբերություն, ներածական մաս	11(3) հոդված, առաջին ենթապարբերություն, ներածական մաս
3է(2) հոդված, առաջին ենթապարբերություն, առաջին պարբերույթ	11(3) հոդված, առաջին ենթապարբերություն, (ա) կետ
3է(2) հոդված, առաջին ենթապարբերություն, երկրորդ պարբերույթ	11(3) հոդված, առաջին ենթապարբերություն, (բ) կետ
3է(2) հոդված, երկրորդ, երրորդ եւ չորրորդ ենթապարբերություններ	11(3) հոդված, երկրորդ, երրորդ եւ չորրորդ ենթապարբերություններ
3է(3) հոդված	11(4) հոդված
3է(4) հոդված	11(1) հոդված
3ը հոդված	12-րդ հոդված
3թ հոդված	13-րդ հոդված

3Ժ հոդված	14-րդ հոդված
3Ժա հոդված	15-րդ հոդված
4(1), (2) եւ (3) հոդված	16(1), (2) եւ (3) հոդված
4(4) հոդված	—
5-րդ հոդված	17-րդ հոդված
9-րդ հոդված	18-րդ հոդված
10-րդ հոդված	19-րդ հոդված
11-րդ հոդված	20-րդ հոդված
14-րդ հոդված	21-րդ հոդված
15-րդ հոդված	22-րդ հոդված
18-րդ հոդված	23-րդ հոդված
18ա հոդված	24-րդ հոդված
19-րդ հոդված	25-րդ հոդված
20-րդ հոդված	26-րդ հոդված
22-րդ հոդված	27-րդ հոդված
23-րդ հոդված	28-րդ հոդված
23ա հոդված	29-րդ հոդված
23բ հոդված	30-րդ հոդված
24-րդ հոդված	31-րդ հոդված
—	32-րդ հոդված
26-րդ հոդված	33-րդ հոդված
—	34-րդ հոդված
—	35-րդ հոդված

27-րդ հոդված	36-րդ հոդված
—	Հավելված I
—	Հավելված II